

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԹԻՒՐԵՒՈՅ ԲԱՐԵՆԱՐԳՈՒՄԸ

Ա.

Կ. Պարէն Եւրոպա հասած լուրերը կը հաղորդեն թէ Թիւրքիոյ նախարարներէն ոմանք օսմանեան պետութեան համար մեծ վտանգներ կը գուշակեն եթէ երկրին վարչական կազմակերպութիւնը շուտով հիմնապէս չբարեփոխուի: Այս տեղեկութիւններուն ստուգութիւնը բնականաբար շատ երաշխաւորեալ չի կրնար ըլլալ. բայց ենթադրենք թէ ոչ միայն քանի մը պաշտօնատար այլ եւ նոյն ինքն սուլթանը բարեփոխումի անհրաժեշտ հարկը զգացած ըլլայ եւ անկեղծօրէն փափաքի կերպարանափոխել երկրին վիճակը, հնարաւոր է այսպիսի խորհուրդներու իրականացումը իսլամական իշխանութեան մը միջնորդութեամբը: Այս հարցումին պատասխանը ժամանակակից պատմութեան մէջ փնտռենք:

\* \* \*

Այս դարու սկիզբը սուլթան Սելիմ Գ Թիւրքիոյ վարչական կազմակերպութիւնը բարեփոխելու պէտքը արդէն զգացած ու այս նպատակաւ ալ ձեռնարկներ ընել սկսած էր: Սուլթան Մահմուտ 1808ին երբ զահակալեց ինքն ալ օսմանեան պետութեան փրկութիւնը հիմնական բարեկարգութիւններէ միայն կը յուսար: Եկնիչերիննրու ջնջումը էն կարեւոր քայլը եղաւ զէպի այլ ճամբան: Հեղինակական ապստամբութիւնը եւ 1829ին Յունաստանի անկախութիւնը ակներեւ պարզեցին երբեմն այնքան ահեղ օսմանեան պետութեան անկումին մեծութիւնը: Ու Թիւրքը Եւրոպայի համար այլ եւս վայրենի ժողովուրդ մը նկատուեցաւ. անոր նորէն Ստիոյ խորերը նահանջը քաղաքակրթութեան պահանջումը սկսաւ գտնուել: Իմաստուն եւ հիռատեոս օսմանցի քաղաքական անձնաւորութիւններ սպանացող վտանգը նախատեսելով, կայսրութեան պահպանումին երաշխաւորութիւնը Թիւրքիոյ եււրոպացումին մէջ կը փնտռէին: Ծովապետ խալիլ փաշա 1830ին կ'ըսէր. «Համոզուած եմ որ եթէ Եւրոպայի քաղաքականութիւնը իւրացնել չաճապարենք, պէտք է

Ասիա վերստանալը աչքերնիս տաննք:» Իսկ սուլթան Մահմուտ կը յայտարարէր. «Ասկէ ետքը ինձի համար իսլամը մղիթին մէջն է, քրիստոնեան՝ եկեղեցիին, հրեան՝ սինակոկային: Ամենքն ալ այդ վայրերը աստուածութեան կ'երկրպագեն: Աստուծոնքէն զուրո՞ւ ամենքն ալ հաւատարապէս միեւնոյն քաղաքական իրաւունքները ու իմ հայրախնամ պաշտպանութիւնն պիտի վայելեն:» Թանգրիմաթի սկզբնաւորութեան թուականը այս խորհուրդներէն կը սկսի:

Սուլթան Մահմուտ 1839 յուլիս 30ին մեռաւ: Իրեն յաջորդեց տղան Ալտ-իւլ-Մեհիա, տասնըվեց տարեկան: Երիտասարդ սուլթանը հօրը խորհուրդներուն շարունակողը ըլլալ փափաքեցաւ: Գործը համեմատաբար աւելի զիւրացած կ'երեւնար, վասն զի Սելիմի եւ Մահմուտի իշխանութեանը միջոցին պատրաստուած էր պետական անձնու սերունդ մը որ կայսրութիւնը բարեկարգել կ'ըզճար: Այս պարոցին զուլսն էր Ռէշիա փաշա, Եւրոպա պաշտօն վարած ու եւրոպական քաղաքակրթութիւնը մօտէն ուսումնասիրած նախարար մը, որ կ'ուզէր իր հայրենիքն ալ քաղաքակրթել:

Մէծիտի զահակալութենէն քիչ ետքը, 1839 նոյեմբեր 3ին, Կիւլհանէի համբաւուր Հաթիթ-Շէրիֆին արարողութիւնը կատարուեցաւ: Այդ հրովարտակով սուլթանը հիմնական փոփոխութիւններ կը մտցնէր իսլամական Թիւրքիոյ քաղաքականութեանը եւ վարչական կազմակերպութեանը մէջ. Հաթիթ-Շէրիֆին ընթերցումը մեծ հանդիսաւորութեամբ տեղի ունեցաւ: Ներկայ կը գտնուէին օսմանեան աւագանին, իւլեմաները, բարձրատիճան զինուորականներ, ոչ-իսլամ հպատակներուն ներկայացուցիչները, օտարազգիներ որոնց մէջ է Ֆրանսայի Լուի-Ֆիլիք Թազաւորին որդին Ժուանովիլի իշխանը: Միտք պահելու ուշադրաւ մանրամասնութիւն մը. ներկայ էր նաեւ մեծ-աստղահայն ալ, ընթերցումի համար բարեգէպ ժամը — էշրէֆ սահաբը գուշակելու համար: Ու այդ ժամը հասնելուն Հաթիթ կարգացուեցաւ 101 թնվանօթի որդասումով:

Բարենորոգումի այս լուրը սկզբնաւորութիւնը Եւրոպայի ստիպողական պահանջումին հետեւանք չէր, այլ ինքնիրմէն զգացուած պէտքի մը ծնունդը: Արդէն յայտարարուեցաւ թէ շուտով Թիւրքիան Եւրոպայի թեւաբար

թեան ներքեւ պիտի իյնար, եւ բարեկարգութեան պէտքն ալ ստիպողական հարկ մը պիտի դառնար: Ու արդարեւ բիշ ետքն ալ թիւրքիա եւ Օսմանի տունը իրենց պահպանութիւնը Եւրոպայի պարտական մնացին: Եւրոպայի Մէճմէտ-Ալի փաշային ապստամբութիւնը մեծ խառնակութիւն առաջ բերած էր Եւրոպայի քաղաքականութեան մէջ: Եւրոպական բանակը Իպրահիմ փաշայի հրամանատարութեամբ Սիրիան զբաւած էր: Ֆրանսա ապստամբ փաշան կը պաշտպանէր: Անգլիա թիւրքիոյ կողմը կը բռնէր, եւ Ռուսիա առիթէն կ'օգտուէր սուլթանին դժուարացող հանդիսանալով թիւրքիոյ դործերուն միջամտելու: Ռուսական նաւատորմը 1833 փետրուար 20ին Վոսփոր կը խարսխէր, սուլթան Մահմուտի հրաւերովը, ու երբ Իպրահիմ իր բանակովը Իսկիւտար եկաւ, ռուսական 15,000 զօրք ալ, միշտ սուլթանին հրաւերովը, ապրիլ 5ին Պէյքոզ եւ Թարապիւս ճամբարեցին: Յուլիս 8ին Հինքեար-Իսկէլէսիի զաշնագիրը ստորագրուեցաւ Ռուսիոյ եւ թիւրքիոյ միջեւ, որով Ռուսիա սուլթանը պաշտպանելուն իբր փոխարինութիւն կարգ մը առաւելութիւններ ձեռք կը բերէր: Բայց եզրպական խնդիրը մինչեւ 1839-41 տեւեց: Յաղթանակը Անգլիոյ մնաց. Ֆրանսա իր քաղաքականութեանը մէջ պարտուեցաւ, եւ Ռուսիա կորոնցուց Հինքեար-Իսկէլէսիի զաշնագրով ստացած օգուանները: Մէճմէտ-Ալի Եւրոպայի մէջ պարփակուեցաւ, զրկուելով իր յաղթանակներուն իրաւունքներէն: Թիւրքիան եւ Օսմանի տունը փրկուած էին, բայց ասոր վե՛մ ալ պետութեան վրայ ծանրացաւ եւրոպական ինամականութիւնը:

Եւրոպական ինքզին կարգադրութենէն յետոյ Րէշիտ փաշա իր աջակիցներով սկսուա երկիրը բարեկարգելու աշխատիլ: Տասը տարի ետանդով գործեց, տեսակ տեսակ դժուարութիւններու կը հանդիպէր, մերթ կ'իյնար մերթ կը բարձրանար, սակայն միշտ առաջ կը տանէր բարենորոգումներու գործը: Բայց ահա 1852ին նահանգները կատարուած քննութիւնները կը յայտնեն թէ բնաւ բան մը չէ փոխուած: Հարտաւարութիւն, բռնաբարութիւն, կեղեքում, կաշառակերութիւն, բարբարոսութիւնը իր ամբողջութեամբ կը ծանրանան երկրին վրայ եւ յատկապէս բրիտանականներուն: Ան աստի մտածուեցաւ նահանգներուն կառավարչական գրութիւնը փոխել: Նահանգի մը կուսակալական իշխանութիւնը որ մինչեւ այդ օրը մէկ փաշայի մը ձեռքը կ'ընդունացած էր, երեք ճիւղի բաժնուեցաւ, քաղաքական՝ որ կուսակալին կը պատկանի, զինուորական՝ հրամանատարի մը, ելմական՝ աւֆըլէրտարին:

Այս նոր գրութիւնն ալ ո՛ր եւ է օգուտ չունեցաւ. երբ Խրիմի պատերազմը ծագելու վրայ էր թիւրքիոյ վատթար վարչութիւնը իր բոլոր վայրագութեամբը քայլութիւն ունէր: Հաւասարութիւնը՝ թուլութի վրայ բառ մը միայն. բրիտանականները միշտ իբր պարտուած ժողովուրդ կը նրկատուէին. սուրբերը ահեղապէս անոնց վրայ կը ծանրանային. կեանքի, ինչքի, պատուի բռնաբարութիւնը առաջուան պէս կը գործադրուէր: Ու երբ Մէնչիքսֆ արտա-

կարգ դեպքան եկաւ, և Խրիմի պատերազմը պիտի ծագէր, սուլթանը բրիտանական ժողովուրդները սիրաշահելու համար նորէն Հաթթը-Շէրիֆ մը հանեց 1853 յունիս 6ին, որով աւելի ընդարձակ կրօնական աղատութիւններ կուտար:

\* \* \*

Խրիմի պատերազմը վերջանալէն յետոյ Բարիզ դեպանախորհուրդ մը գումարուեցաւ 1856 փետրուար 25ին: Առաջին անգամը ըլլալով թիւրքիա կը մասնակցէր Եւրոպայի քաղաքակիրթ պետութիւններու ժողովի մը: Դեպանախորհուրդին բացումէն քանի մը օր առաջ, փետրուար 18ին, սուլթան Մէճիտ պետութիւններուն հաղորդեց նոր Հաթթը-Հիւմայուն մըն ալ որով կը յայտարարէր թէ «տոանց դասակարգի եւ դաւանանքի խարութեան, կայսրութեան համար կիւլհանէի Հաթթը-Հիւմայունով մեր կողմէն խոստացուած երաշխաւորութիւնները, ինչպէս եւ թանգիմաթի օրէնքները, այսօր վերահաստատուած ու ամրապնդուած են, եւ արդիւնաւոր միջոցներ ձեռք պիտի առնուին որպէս զի լիապէս և ամբողջապէս գործադրուին:» Ու յետոյ կը խոստանար.

1. Օրէնքին առջեւ ամէնուն հաւասարութիւն.
2. անհատական եւ հաւաքական սեփականութեան յարգանք.
3. ամէն հպատակներուն անխախտ մասնակցութիւնը հայրենի պաշտօններու եւ զինուորական ծառայութեան.
4. կրօնքի ազատութիւն 5. դատական ու վարչական բարենորոգումներ, եւայլն, եւայլն:

Պետութիւնները այս Հաթթը-Հիւմայունին «բարձր արժանիքը գնահատեցին» ու Բարիզի զաշնագրին 7րդ յօդուածը տրամադրեց հետեւեալը. «Պայմանագրող պետութիւնները յանձն կ'առնեն յարգել օսմանեան կայսրութեան անկախութիւնը եւ հոգային ամբողջութիւնը, «Իսկ փոխարէնը՝ սուլթանը իրենց կը հաղորդէ — իր «ինքնահաճութեամբը — նոր ֆէրման մը որով իր վեհապետական կամքովը բոլոր հպատակներուն կ'երաշխաւորէ իրենց արդէն սենեցած իրաւունքները:»

Իսկ 9րդ յօդուածով պետութիւնները կը հաստատէին փետրուար 18ի Հաթթը-Հիւմայունին մեծ կարեւորութիւնը, որ սակայն ո՛ր եւ է պարագայի մէջ «իրենց չը կրնար իրաւունք տալ հաւաքաբար կամ առանձինն մեջամտելու նորին վեհապետութեան սուլթանին իր հպատակներուն հետ ունեցած յարաբերութիւններուն, եւ ոչ «ալ կայսրութեան վարչական գործերուն»:

Աս թուականէն ետքը թիւրքիա բարենորոգումի գործնական շրջանակի մէջ մտած էր, իրեն զուլս ունենալով երկիրը բարեկարգել փափաքող սուլթան մը եւ մեծանուն նախարարներ, ու Անգլիա եւ Ֆրանսա աջակից ու յենարան:

Իսկ եթէ կ'ուզենք իմանալ թէ բոլոր այս բարի տրամադրութիւնները եւ անկեղծ օժանդակութիւնները ինչ արդիւնքի կրնային յանգիլ, յիշատակենք Լիբանանի վեպը որ իր բոլոր մանրամասնութիւններուն մէջ շատ

բնորոշ է, եւ մասնաւորապէս Հայոց համար ուսումնասիրութեան նիւթ պէտք է մատակարարէ:

\* \* \*

Լիբանան միշտ յուզուած էր իսլամ Տիրութեանը եւ քրիստոնեայ կաթողիկ Մարոնիներու հակառակութեամբը: Բարիզի վաշնագրով խոստացուած բարենորոգումները կատեղեցուցին իսլամները: Եւ ահա 1860 ապրիլ 27ին երեք Մարոնի սպանուեցան Քաթուլի. մայիս 16ին ուրիշ չորս ալ, որոնց մէկը եկեղեցական: Ֆրանսայի հիւպատոսը կ'երթայ կը գտնէ Պերուլի կառավարիչ Խուրշիտ փաշան եւ կը վանդատի. պատասխան կը ստանայ թէ այդ զժառգութիւններուն պատասխանատուն քրիստոնեայ քովիներն են որ իսլամները կը զրգոնեն: Մայիս 29ին քրիստոնեայ աւան մը բոլորովին կ'այրի մոխիր կը վառնայ, յետոյ հետզհետեւ ուրիշ երկու հատ ալ: Ֆրանսայի հիւպատոսը իր զանգաւանները կը շարունակէ, եւ Խուրշիտ փաշան ալ միեւնոյն պատասխանները կուտայ. «Քրիստոնեաներուն քովիները եւ քրիստոնեաներուն եպիսկոպոսն են այս չարիքներուն պատճառը:» Սարսափահար քրիստոնեաները Սայտայի անտառը կ'ապաստանին: Միւլիները կը զրգոնեն իսլամները, զէնք կը բաժնեն անոնց, Տիր զիններն ալ կը վազեն կ'երթան, ու ամենքը անտառը մանելով կը ջարդեն քրիստոնեաները որոնք 700 հոգի էին: Չալէ կ'այրեն Ֆրանսացի ճիզուիթներու պարօցը, կրօնաւոր մըն ալ կը սպաննուի. ուրիշներ ալ կը կոտորուին: Սարսափը տիրած էր Տէյր-էլ-Քամա. Թիւրք զինուորական հրամանատարը իր բնակարանին դռները կը բանայ յունիս 22ին, ու բոլոր քրիստոնեաները ներս կ'առնէ, իրր ապահով ապաստանարանի մէջ, կը խոստանայ որբան մը պիտի չըլլայ, ու ամէնուն զէնքերը կը ժողովէ: Պերուլի կառավարիչ Խուրշիտ փաշան ալ կը հասնի. ներքը կը փակուի, իսլամներն ալ ներս կ'առնեն, ու մինչեւ միւս օրը կը ջարդեն բոլոր ապաստանողները որոնք 2,000 հոգի էին: Դուրսը մնացողները լեռներէն անցնելով ծովեզերք կ'իջնեն, ու եւրոպական նաւերը կ'ապաստանին:

Այս ահուկ լուրերը կը հասնին Եւրոպա: Յետոյ Գամասկոսի ջարդին տեղեկութիւնները: Գամասկոս 130 հազար իսլամ եւ 20,000 քրիստոնեայ կար. յուլիս 9, 10, 11ին ջարդը տեղի կ'ունենայ. քրիստոնեաներու դիակները հարիւրներով զետին կը փռուին. Ֆրանչիսկեան ներս վանքը կ'այրի, ութ կրօնաւոր ալ մէկտեղ. կառավարիչ Ահմէտ փաշա անտարբեր հանդիսատես կը մնայ: Այս կոտորածն ալ յուլիս 16ին Բարիզ կ'իմացուի եւ Նաբոլէոն Գ անմիջապէս 6,000 զօրք կը խրկէ Լիբանան:

Ֆրանսայի միջամտութիւնը տեսնելով Դուրը տակնուվրայ կ'ըլլայ, եւ աճապարանքով Ֆուատ փաշայի նախագահութեամբ զինուորական յանձնաժողով մը կը խրկէ Լիբանան լիազօր իշխանութեամբ: Ֆուատ փաշա հրացանի բռնել կուտայ 111 զինուորական, 157 քաղաքային անձնաւորութիւններ կախել կուտայ, 318 յանցաւոր տաճանակիր աշխատութեան կը խրկէ, եւ 148 հոգի ալ

աքորի: Ահմէտ փաշան ալ հրացանի կը բռնեն, բայց առտուն կանուխ եւ առանց վկայի, ինչ որ ենթադրել կուտայ թէ մեծ պատասխանատուն փախուցեր են. նմանապէս կ'ազատի Խուրշիտ փաշան ալ, որ բանտարկութեան համար Պոլիս խրկուելով, հանդիստ կեանքի մը ամէն վայելութեանը կ'արժանանայ: Միւս բոլոր բանտարկեալներուն և աքորեալներուն հետ Թիւրքական իշխանութիւնը շատ մարդատիրութեամբ կը վարուի:

Ֆրանսական զօրքը երբ Լիբանան կը հասնի խաղաղութիւնը արդէն վերահաստատուած կը գտնէ: Թիւրք զինուորները կը միանան Ֆրանսականներուն խուզարկութիւններ ընելու, եւ առիթէն կ'օգտուին որպէս զի փախցնել տան այն բոլոր իսլամները որոնք վտանգուած են:

Լիբանանի առանձնաշնորհեալ վարչութիւն մը տալու առաջարկը Ֆրանսայէն կը ներկայանայ, բայց Անգլիա կը դիմադրէ: Վերջապէս երկարատեւ բանակցութիւններէ յետոյ 1861 յունիս 9ին չափաւորեալ ինքնօրինութիւն մը կը տրուի: Լիբանանի կառավարիչը կաթողիկ քրիստոնեայ մը պիտի ըլլայ, մեծ պետութիւններու հաւանութեամբ վաւերացուած, եւ պաշտօնավարութեան եօթը տարուան պայմանաժամով: Նահանգը վեց սանձագի կը բաժնուի, իւրաքանչիւրը իրեն առանձին վարչական ժողովը, խառն դատարանը եւ խառն ոստիկանութիւնը ունենալով: Առաջին նշանակուած կառավարիչը կաթողիկ հայ մը կ'ըլլայ, Տալուտ փաշա: Թէեւ չափաւոր առանձնաշնորհութեան այս ամենքը բայց անկէ ի վեր Լիբանան հանդիստ է:

\* \* \*

Սուլթան Մեհմետ 1861 յունիս 28ին մեռաւ. իրեն յաջորդեց եղբայրը Ապտ-իւլ-Ազիզ: Նախարարական յեղափոխութիւն մը 1876 մայիս 30ին գահընկէց ըրաւ Ազիզը, ու գահը հանեց Մեհմետի անդրանիկ սրբին Մուրատը: Աս ալ նոյն տարուան օգոստոս 30ին իբր խելագար վար առնուելով, եղբայրը Ապտ-իւլ-Համիտ իր տեղը անցաւ: Թիւրքիոյ բարենորոգումներու խնդիրը այս 38 տարուան ժամանակամիջոցին նոր շրջանի մը մէջ կը մտնէ: Լիբանանի ղեկները կը բանային նոր թուականը: Բարեկարգութեան պէտքը այլ ևս սուլթաններու իրաւասութեան եւ բարեացակամութեան շրջանակէն դուրս ելլելով Եւրոպայի միջազգային քաղաքականութեան օրակարգը կ'անցնի: Թիւրքիոյ վաթսուտ տարուան ներքին պատմութիւնը ցոյց տուած էր թէ սուլթան ու նախարարներ եթէ յօժարակամ իսկ ըլլան դարձեալ անկարող են ո' եւ է բարեկարգութիւն մտցնել երկրին վարչութեան ու իսլամական բարքերուն եւ աւանդութիւններուն մէջ: Իսկ երբ այդ յօժարակամութիւնը կը սլակուի, ու անոր տեղն ալ քրիստոնեաներու գէմ հալածանքը պաշտօնապէս Թիւրքիոյ պետական քաղաքականութիւնը կը վառնայ, զիւրին է երեւակայել թէ ատ պարագային քրիստոնեայ հպատակներու զժառգութիւնը ինչ համեմատութիւններ կ'առնէ Թիւրքիոյ մէջ: Այս ճշմարտութիւնը այլ ևս ակ-

ներեւ է. ընդհանուր բարեկարգութեան խնդրին լուծումը անհնարին կը նկատուի, ուստի քրիստոնեաներու ինքնա- վարութեան սկզբունքը կը հռչակուի, եւ դորձադրութիւնը Եւրոպա բռնութեամբ կը կատարէ: Յաջորդ յօդուածի մը մէջ այդ նոր թուականին պատմութիւնը կ'ամփոփենք:

ՃԱՄԱՂԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐ

ՀՐՈՍԱԿԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

Ե

Թաքստոցիկ մեջ. — Վերադարձ Արմուտան. — Կա- սափարական տագնապ. — Մատիչի մը վարձատրոշ- քիակը. — Սարերոշ մրայ. — Պատերազմ:

Պէյլերեան ու Պատուելին ապահով էին Ալինաձորի թաքստոցը: Քանի մը ժամ ետքը Մարտիրոսը գալով ու- տելիք բերաւ, զեղը պատահածները պատմեց, եւ իմա- ցուց թէ յիսնապետը յաջորդ օրը պիտի մեկնէր: Մար- թինի ու փամփուշտ առին եւ գացին Մաշաթին սարը որ յարմար գիրքով քար մըն է: Լուսուն Ղարա Միլըրը ե- կաւ, կրակատ հովիւ պատանին որ հալածեալներուն ու զեղին միջեւ միջնորդն էր: Իրիկուան Մարտիրոսը եկաւ ու իմացուց որ Արմուտան զօրք եկած է, մարդիկ կը ժող- վեն, ու միւս օրը լեռները խուզարկութիւններ պիտի կա- տարուին: Պէյլերեան ու պատուելին պարտաւորուեցան վերագառնալ իրենց թաքստոցը, զոր գէշ վիճակի մէջ զը- տան: Խոտ հնձելու եկող աղջիկներ տեսնելով որ սէքի- մին վրայ ցանուած աուդյաը շատ թարմ է ջուր կը կա- պեն եւ կը ջրեն: Խեղճերը չեն կասկածիր թէ փախտա- կաններու կեանքին հետ կը խաղան: Պահարանը ջուրով լեցուած էր: Մեր խեղճերը կ'աշխատին ջուրը խոտով չորցնել, բայց թացութիւնը կը մնայ. ու վրայէն ալ ջու- րը կը կաթկթէր: Միւս օրը հնձող աղջիկները եկան, ա- նոնց խօսակցութենէն թաքստոցիները իմացան որ բռն- նուողներուն մէջն է եւ Մարտիրոսը: Գիշերը Ղարա Մը- կըրը լուր բերաւ թէ անմիջական վտանգ չկար. ուստի եւ Պէյլերեան ու Պատուելի գեղ երթալով Պատուելին տու- նը, հոն բազաքացիի զղեսանին փոխեցին ու լեռնական- ներու տարագը առին վրանին: Անցուցին խաչածե ուտե- ղուն վրայ փայլուն փամփուշտները, ալ ու ձախ ձգեցին արծաթապատ խանչերին ու բլթովներին: Եկան նաեւ միւս չորսն ալ, որոնց պաշարը հատած էր, ու շին զի- տեր թէ գեղը ինչե՛ր պարձած էր: Հրոսակի զղեսաներով փոքրիկ խումբը գեղեցիկ, կարծի լեռնականներ պարձած էին: Պատուելին իր յիշատակներուն մէջ չի կրնար իր- զմայլումը, սէրը, տրամուծիւնը զսպել ու կը գոչէ. « Հա- պա անոնցմէ մէկը Բնչպէս նկարագրեմ. իր հսկայ մարմ-

նով եւ առոյգ կազմուածքով երկնային էակ մը պարձած էր: » Պէյլերեանն էր:

Մարթինիները ուսերնին մեկնեցան երգելով.

Ինչե՛ւ վ եւ նրանք մեզ տիրելոշ արժանի:

\* \*

Հայրենիքի ազատագրութեան նուիրուած յեղափո- խական մարմէն վեց հոգի միայն մնացեր էին, ու կը բաշուէին լեռները յուսահատական կոիւ մը ձգելու, շատ անհաւասար պայմաններու մէջ: Այդ վեցն էին Վահան Պէյլերեան, Նշան պատուելի ֆէլչիշեան, Ճինկօ, Գարե- զին, Հրանտ, Եէկէն Պաղտասար: Հինգը բաջաոզղ էին, բայց Պէյլերեան, փափուկ կեանքի վարժ երիտասարդ, ջերմ կը բռնէր: Ալինաձորի թաքստոցին խոնաւութիւնը խանգարած էր առողջութիւնը: Ու խեղճը մարմնական տառապանքներուն հետ հոգեկան շարժարանքներու ալ ենթարկուած էր. կը տանջուէր տեսնելով որ իր ընկեր- ներուն ծանրութիւն կ'ըլլար, եւ շարժումներուն արգիլը: Բայց ի՛նչ ընել:

Օրերով մնացին Մաշաթի սարը: Կառավարութեան կողմէն շրջուն հեծելազօրքը կը պատէր ամէն կողմ բայց հրոսակներուն հետքը կարող չէր գտնել: Ամէն գիշեր Ղարա Միլըր որոշուած տեղը դրաւ որ կը ձգէր յաջորդ օրուան համար կառավարութեան պատրաստած ծրագիրը: Բայց մէկ երկու օր ա՛լ զօրքերը պտոյտի չէլան, ուզելով խարել փախտականները: Միայն թէ միւտիր հաճի Գե- որդ նոր դիւտ մը բրած էր. կանչելով սիրելի Սերովբէ ֆէօսեանը, յեղափոխական վարչութեան նախորդ ան- զամը, անոր յանձնարարեց պրպտել լեռները եւ փախը- տականներուն հետքը գտնել: Սերովբէ ուզեց որ միւտիրը բռնութեամբ ստիպէ Նշան կէճէեանցը իրեն ընկերանալ. որովհետեւ առ երիտասարդը հաւատարիմ մնացած էր յեղափոխութեան, ուստի անոր ընկերակցութիւնը իրեն երաշխաւորութիւն մըն էր: Նոյն գիշերը Ղարա Միլըր կը դրէր. « Սերովբէ այսօր միւտիրին հետ չի կար. միւս պաշտօնակցին հարցուցի՝ ըսաւ թէ կէճէեանց Նշանին հետ տեղ մը գացին եւ չգիտեմ: Չըլլայ թէ լրտեսելու ե- կած ըլլան, զգուշութիւն: »

Օր մը այս խմբակը Ապուշտայի բերդին զիմացի կող- մը ինկող կիրճի մը մէջ անուշ ջուրի մը վրայ նստած ու- րախութեամբ ուլիկ մը կը խօրովէր: Տեղը ապահով, օդը լաւ, ու իրենց երգելով Մարթինիի չպոթիւր շամբոյր շի- նած կը պարձնէին խորովածը. կերան. մէկ մասը հան- զըստացաւ, միւս մասը հսկեց. յետոյ փոխադարձաբար: Այսպէս ուրախ անցաւ օրը. եւ իրիկունը ճամբայ ինկան սովորականէն բիչ մը կանուխ, սրուշեալ տեղը երթալով հաց ու լուր առնելու: Ճինկօ եւ Գարեզին որ ֆիւրտի լաթեր հագած էին առջեւէն կ'երթային, ու միւսներն ալ երկուքական բաւական հեռուէն: Խոհեմութեան համար այս կարգով կ'ընթանային: Ա՛լ մօտեցած էին Մեծ- Արմուտան ցիւներու այգիներուն, երբ այգիի մը դրան մօտ մէկը կնոջ մը հետ կայնած « բարի երթաք » ըսաւ: Ճին-

իօ փոխանակ հայերէն խօսիլու, թիւրքերէն հարցուց .

— Գուց հոս ի՞նչ կ'ընէք, անհաւատներ . Պէյլէրեանը կը պահէք, այնպէս չէ՞ . մենք անիկա փնտռելու եկած ենք Տիւրքի կողմէն . ու երբ բանեք կտոր կտոր պիտի ընենք :

Խօսակիցը պատասխանեց .

— Չէ՛, մի՛ ընեք, եղբայրս . ինչո՞ւ թիւրքերէն կը խօսիս, ես ձեզի կը ճանչնամ . տեսնել կ'ուզեմ . ընկեր ալ ունիմ :

— Անունդ ի՞նչ է, հարցուց ճինիօ թիւրքերէն :

— Սերովբէ ֆէօսէեան :

— Հա՛, ես ալ քեզի կ'ուզեմ, գոչեց ճինիօ, եւ բըռնեց գանի :

Կինը սր այդին ջրոյ մըն էր, աս լսելով վախէն փախաւ այդետուն : Երբ ճինիօ եւ Գարեղին կանգ առած էին, միւսներն ալ տեղերին կեցած էին՝ խօսակցութեան արդիւնքը տեսնելու : Գետին միւս կողմէն ալ մէկը ասոնց նշանացի կը հասկցնէր առաջ չերթալ : Եւ անիկա աճապարեց անցաւ ջուրը, և ասոնց բով եկաւ . կէճէեանց Նըշանն էր : Պատմեց միւտիրին ըրածը, եւ յայտարարեց թէ ինքն ալ կը միանար խումբին : Աս միջոցին ճինիօ եկաւ . « Գտայ, գտայ, կը պտտար, աչքերնիդ լոյս, եւ կապեցի ալ : Սերովբէ, Սերովբէ : »

Բռնած գերիինն առջինին ձգած հրոսակները ջաղացքէն վեր վազեցին : Հասան կառավարան տեղին : Սերովբէր կապուած կ'աշխատէր ինքզինքը արդարացնել . « Ես անպարա եմ, բայց զբարտաւթիւն է ի՞նչ եմ ըրեր . չըսէք դո՛նէ մէկը : »

— Էօմէրի ինզորին մէջ ընկերներդ մատնողը ո՞վ էր, հարցուցին . անոնք հիմա բանան են : Ընդհանուր գատախազին հետ երկու ժամ առանձին տեսնուողը ո՞վ էր : Քեզի միւտիրին օգնական ինչո՞ւ տուին : Գիշեր ատեն ընկերներուդ մասին վկայութեան դատողը ո՞վ էր . ո՞վ զիտար քննէ զատ վարչական բոլոր անդամներուն անունները . ո՞վ բացատրեց ծրագրին կական կէտերը մի առ մի : Եւ ո՞ր մէկը :

Ալ լռեց Սերովբէ, « մեղայ » գոչելով :

— Սեր ծրագրին մէջ մեղայի թողութիւն տեսա՞ր երբեք :

— Ո՛չ . բայց ներեցէք ինձի . խաբուեցայ մեր ֆերովբէն . ասկէ ետքը ձեր հետ կը մնամ . ներեցէք ինձի :

— Ըստ ընկերական գատարանի վճոխն մահուան գատապարտուած ես, յայտարարեցին :

Ու անիկա զեռ կը պտտար .

— Պատուելի՛, երաշխաւորէ ինձի :

Յեղափոխականները սուրերնին բաշեցին և հարուած հարուածի վրայ տուին :

« Ո՛ վառվառն վարչական ժողովի անդամ, գոչեցին, « ո՞ր քարոզիչ Յեղափոխութեան ժամը հասած ըլլալուն, « ո՞ր եռանդուն գործիչ, ինչո՞ւ չեղեցար շիտակ ճամբէդ և « տասնեակ ընտանիքներու թշուառութեան պատճառ « դարձար . բանախ մէջ քու հարազատ եղբայրներդ կը « հեծնն եւ պիտի հեծնն շատ . ինչո՞ւ ըրիր և քու ընկեր-

« ներուդ կոյս սուրը որ թշնամուն էր պահուած, զայն « պղծեցիր, յակամայտ հայու արին թաթխելով : »

Այս վերջին սղորը կարգաւոր վրան, սուրերնին սըրբեցին, պատեանը զրին, ու ճանապարհ ինկան . լուսնի լուս էր : Մատնիչը կէս հողին զեռ վրան մրտաւոր ջուրը ինկաւ :

\* \* \*

Կէճէեան Նշան ա՛լ ետ գտնուալ չուզեց, միացաւ խումբին . ամենքը մէկտեղ հեռուները գացին : Օր մը ետքը սակայն Նշան չկրնալով տանիլ այդ տառապանքի կեանքին փափաքեցաւ զեղ վերադառնալ : Միւսները թէեւ մտաբերեցին սպաննել իրենց նորեկ ընկերը, բայց որովհետեւ անցեալին մէջ արասաւոր չէր գտնուած ուստի եւ իրենց խիղճը չթոյլարեց պատմել մարդ մը պարզապէս խոհեմութեան համար : Նշանի խորհուրդովը անոր ձեռքերը ու սաքերը կապելով տարին տեղ մը նեանցին, իբր թէ ֆիւրտերուն գործը եղած ըլլար : Հովիւները գտան այդ պրկուած մարդը եւ զեղ տարին . հոն բանտարկուեցաւ : Այս միջոցին Սերովբէին ալ զիտար երեւան եկած էր : Կառավարութիւնը Նշանը շատ նեղեց . առջի բերան բան մը չխօսեցաւ, բայց ետքէն սպաննալիքի ներքեւ ամէն բան զուրս տուաւ : Այս յայտնութիւններուն վրայ կառավարութիւնը կրկնակի զօրութեամբ սկսաւ փնտռել հրոսակները : Յունիս 16ին, հինգշաբթի օր, իշխանութեան հրամանաւ բողոքութիւն զիւղացիներու ուստիկաններու եւ զօրքերու միացան և ամէն լեռ ձոր մանրակրկիտ փնտառուցներ ընելու ելան :

Այդ օրը հրոսախումբը առատ ճաշ մը ընելու բաղդաւորութիւնը կ'ունենար, երկու օրուան անօթութենէ յետոյ : Իրենցմէ մէկը սարի մը կատարէն հակողութիւնը կ'ընէր զիտակով, իսկ միւսները օղիով ու գինիով ճաշերնին կ'ընէին : Յետոյ մէկ երկուքը սարերէն վար իջան ճամբուն վրայ, ուսկից զեղացիները կ'անցնէին արսերէն ետ գտնուալով : Իրար ճանչցան, պաշտուեցան, ու ձերուկ մը ըսաւ համբուրելով աս կտրիճները . « Ախ, զաւակներս, սրչափ փափաք կ'ընէի ձեզի տեսնել, մուրատիս հասայ : Աւրբէք, ո՞ղջ ըլլաք . սաքերնիդ քարին չի գայ, հայու քաջի, սրտիս հատորներ . ես ձեր ըլլալու չեմ : » Եւ օրհնեանքը տալով մեկնեցաւ : Քիչ վերջը ատիկ անցաւ մատնիչ հաճի ճանիկին եղբօրորդին իր մշակովը :

Պատուելին ու Պէյլէրեան կը հսկէին սարէն . եւ ահա տեսան հեծելազօրքը սր շիտակ ճամբէն կուգար, ու լեռներէն ալ հետիտան բազմութիւն մը : Տարակոյտ չկար թէ իրենց ետեւէն ինկողներն էին . խորհեցան աւելի բարձրերը ելլել, հոն բնութեան շինած մարակոցներուն ապաստանիլ, եւ անկէ կուռիլ, եթէ հարկ ըլլար : Արդէն մթննալու երեք ժամ կար . եթէ կարենային զիմանալ, անկէ ետքը փախուտար հեշտ էր : Ու այսպէս ալ ըրին . աւելի բարձր սարերը ելան, եւ կարգաւ իրենց տեղերը բըռնելով կուռի պատրաստուեցան :

Կառավարութեան հաւաքած զօրքն ու բազմութիւնը

նոյն օրը ամէն կասկածելի ծակուծուկ փնտոելէ յետոյ յոգնած դադրած եւ յուսահատ կը վերադառնային փոքր-Սրբուտան: Եւ ահա մատնիչ հաճի ճանիկի եղորորդին, որ աեսած էր հրոսակներէն մէկ քանին, լուր խրկեց փրն. առաւել ընդհանրուն թէ՛ «Չեր փնտոածները հոս այս ինչ տեղն են, ինչո՞ւ կը վերադառնաք:» Այս տեղեկութեան վրայ բազմութիւնը սկսաւ յառաջանալ մատնանիչ եղած վայրը: Բայց կուգային հանդարտ ու հանդիստ, կարծելով թէ ձեռքովին զրածի պէս պիտի գտնեն, ու առանց ո՛ր եւ է ընդդիմութեան հանդիպելու պիտի առնեն տանին: Եւ ոչ իսկ մարերնէն կ'անցնէր թէ այդ Հայերը կառավարութեան զօրքին վրայ կրնան հրացան պարպել:

Հրոսախումբը՝ վճռած էր կոռուիլ. բայց Պէյլըբեան ու Պատուելին որ յառաջադահներն էին, սրոշեցին կրակ ընել՝ վախցնելու եւ փախցնելու նպատակաւ միայն, առանց մէկը սպաննելու: Գիտնալով թիւրքերուն բարբարոսութիւնը, կը վախնային որ եթէ անոնցմէ քանի մը հոգի մեռնեն, գեղերը մօտիկ ըլլալով զօրքը հոն կը խուճէ եւ ապտամբներուն վրէժը խեղճ զեղացի Հայերէն կը լուճէ, ջարդելով ամենքը: Այս սրոշումին հաղորդեցին Եէկէն Պագտասարին որպէս զի միւսներուն ձայնէ. բայց անիկա առանց այս մանրամասնութիւնները ըսելու, միայն պատրաստ գտնուելին կը հրամայէ:

Թշնամին կը յառաջանար. հեծելազօրքը առջեւէն, հետիւտան բազմութիւնը ետեւէն: Նշանը արուեցաւ. վեց մարթիոնի գնտակները սուբալով անցան թշնամիին քովէն. երկու ձի, ստաիկան զինուոր մը վիրաւորուած ինկան: Ու ահա մէկէնիմէկ զաշարը գատարկեցաւ. սչ ոք կար:

Առաջին կոխէն էր, ու բնականաբար մարտնչող Հայերուն սրտերը կը տրոփէին: Անցաւ երկու վայրկեան եւ ահա ամէն քարի, ամէն լերան ետեւէն գնտակները սկսան կարկուտի պէս թափիլ: Հրոսախումբը զէմը ունէր պատերազմող կանոնաւոր բանակ մը: Հայերը չվարանեցան պատասխանելու: Հիմա թշնամին ալ պատնէլի ետեւ էր: Մերիները սրոշած էին կոռուիլ մինչեւ վերջին շունչերնին. 300 ական փամփուշտ ունէին, եւ 50 ական ալ ըլլովկերի համար: Պաշարուելու վախ ալ չկար. անանկ ձեւով շարուած էին որ բիշ ըլլալով հանդերձ թշնամիին առջեւը կտրած էին:

Այսպէս կ'անցնէին ժամերը. բայց փոքրիկ խումբին ձախ թեւը, սրուն գործը Գարեգինին յանձնուած էր, տը կարացած կ'երեւնար. այլ եւս հրացանի պայթիւն չէր լսուեր անկէ: Ի՞նչ եղած էր: Եւ ահա ձորի մը մէջէն ճինկոյին ձայնը եկաւ. «Աճապարեցէք բոլորդ ալ հոս եկէք:» Չորսը միջոց գտած էին այդ ապահով տեղը հաւաքուելու. Պատուելին ու Գարեգինը զուրք կը մնային: Գարեգինը մէջտեղ չի կար: Պատուելին զրաւած զիրքէն անընդհատ կրակ կ'ընէր: Թշնամին յառաջանալով Պատուելին ոտքը նշմարած էր քարերուն տակէն եւ միշտ հոն նշան կ'առնէր: Վարէն անդադար կը ձայնէին Պատուելին ձորը իջնել. բայց ան չէր կրնար. պէտք էր երկու

վայրկեան բաց տեղէն վազել, ու պիտի տեսնուէր: Հետեւաբար միւսները թշնամին զբաղեցնելու համար սկսան կրակ ընել: Այդ բոպէին Պատուելին պատնէլէն ցառքեց զէպի ընկերներուն քովը. երկու քայլ առած ինկաւ. կարծեցին թէ վիրաւորուեր է. բայց անիկա մաշխար հոն ձգած զլստրեցաւ ընկերներուն քով: Ոտքին վրայ ուռեցք կար, բայց առանց կապարի վէրքի. պինդ մը կապեցին: Թշնամին մաշխար տեսնելով յաղթական աղաղակներ բարձրացուց, կարծելով թէ պատերազմիկ մըն է սպաննուեր. ու երբ ուրախութեամբ զէպի հոն կը յառաջանային, հրոսակներն ալ այդ առիթէն կ'օգտուէին աներեւութանալու համար: Հոն ձգելով իրենց ուտելիքը, զեղերը, կարեւոր բաներ, հինգը սկսան հեռանալ. ու մուլին հասան Մաշաթին քարը:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱԿԱԲՈՅԾՆԵՐԸ

ՈՐ ՄԵՆՔ ՀԵՒՈՍ...

- Չաւակ ունի՞ս:
- Այո՛, պարոն, երկու մանչ, բայց մեծը նշանաւոր բան է... ճիշդ ինծի կը նմանի:
- Ալեքսանդրիա, Շերիֆ փաշա փողոցը քալած ժամանակին այս հարցումը կ'ազդէր ու այս պատասխանը կ'ընդունէր Վարդհոգեանէն՝ որ նոր հասած Ալեքսանդրիա՝ Գահիրէ պիտի երթար:
- Պանքայի ցոյցէն քանի մը ամիս ետքը, կարծեմ յունուարի մէջ էր, երբ իմացանք որ ընդհանուր ներում եղեր է: Լուրը տարածուելէն քանի մը օր ետքը ուրիշ լուր մըն ալ տարածուեցաւ.
- Իմացա՞ք:
- Ի՞նչ:
- Վարդհոգեանն ալ ազատեր է ու կիպրոս գացեր է. անիկ ալ Ալեքսանդրիա պիտի գայ եղեր:
- Օր մըն ալ ըսին.
- Կուգայ կոր... եկա՛ւ:
- Ու ահա՛ լայն ու երկայն ցցուած ականջներով, խոշոր քիթով, հերկէն դարձող յոգնած եզի տարտամ նայուածքով, զլսուն զարկած մէկը ներկայացուցին մեզի ըսելով.
- Պարոն Վարդհոգեան, մեր անդրանիկ հերոսներէն մէկը:
- Որ մենք հերոս, ըսելով Վարդհոգեան սկսաւ ի.օ. սիլ...
- Բայց ես արդէն հեռացած էի:
- Չէ՛, ա՛լ չի կրնար համբերել: Պոլսէն մեկնելու ի վեր այս քսաներկուերորդ հերոսն էր որ ցոյց կուտային ու մինչեւ կոկորդոս լեցած էր հերոսով:

Հերոս...

Հրացանը ուսը զարկած, մէջքը ասրճանակ ու դաշոյն, կայտառ մարզ մը, սիխերը մինչեւ ականջն ի վեր, վառ աչքեր, խիզախ, աներկիւղ կերպարանքով, որուն տեսքը յոյս մըն է իրեններուն ու սարսափ թշնամիներուն համար: Լեռները կ'ապրի ան, իրեն պէս կտրիճներուն հետ: Սուրհանգակին վրայ կը յարձակի, բանտերը կը կոխէ ու անմեղ բանտարկեալները կ'ազատէ, չարագործ հարստահարիչները կը սպաննէ, անգոր զեղացիները կը պաշտպանէ: Ինքը՝ առանձին՝ պատերազմ կը մղէ Խշխանութեան դէմ: Չըլլալիք բաներ կը պատմուին իր վրայ, չըլլալիք բաներ որոնք բան մը չեն իր ըրածներուն քով: Ու իրիկունը, երբ աղջիկները կը դառնան դաշտէն, իրենց անուշ ու սիրտտարի նայուածքը ուղղելով դէպի լեռը ուր կը գտնուի ան, սրտատրոփ ու երկիւղած կը նային երկայն ու կ'աղօթեն: Անիկա չի բռնուիր, չի բանտարկուիր, չի նախատուիր, չի ծեծուիր, չի մեռնիր...

Ահա՛ ինչպէս կ'երևակայեմ Հերոսը: Ու եղած են այդպէսներ մեր վերջին տարիներու թաղձաղին պատմութեան մէջ:

Իսկ այդ քսաներկուքը որ տեսայ... ա՛հ իրենց դիւցազներգութիւնը:

Հնչակ առած ժամանակին, Հնչակ կարգացած ժամանակին, Հնչակ տուած ժամանակին ձերբակալուած հերոսներ, կարգ մը ժակարոյճներու համար ստակ հաւաքած աստեղծութիւններ, խաչուէի մը անկիւնը քանի մը դաւաթ օդի զգրեցութեան տակ անօգուտ շաղակրատութիւններ ընող հերոսներ, վտանգաւոր թղթեր դրպանին պատգնող հերոսներ, որոնք ոստիկանութեան ճանկը ինկած են:

- Դո՛ւն ալ մի քսմիթէն ես, հէ՛:
- Ամա՛ն, Լիֆէնտի, ի՛նչ կ'ըսէք, ձեր սաքին հոյլը պապնեմ, ես երբեք...
- Տակաւին կ'ուրանա՛ս, շո՛ւն, ա՛ն քեզի:
- Ու ապտակները կ'իջնան շե՛շտ երեսին:
- Ամա՛ն, մեղայ, ես բան մը չեմ ըրած, ես սուլթանին հաւատարիմ ծառան եմ, սաքերնիկ պապնեմ:
- Կեցի՛ր, ես քեզի խօսեցնելու կերպը գիտեմ. հիմա չես ուզեր խօսիլ, բայց քանի մը օրէն պուլպուլի պէս պիտի խօսիս:

- Ու խօսքը բանտապետին ուղղելով.
- Տարէ՛ք սա ցած կեալուրը գնտան նետեցէ՛ք:
- Եւ բանտապետը ապտակելով, հայհոյելով, հարուածելով կը զործադրէ հրամանը ու կը ասնի նկուղ, ուր մեր ապագայ հերոսը կը ձայն քանի մը օր:

Ու այսպէս հարցաքննութիւններէ, նախատինքներէ, ապտակահարութիւններէ ետքը, օր մըն ալ ցկեանս բերդարկելութեան կը դատապարտուի: Երեք տարի, հինգ տարի կամ եօթը տարի ետքը՝ առտու մը՝ բերդին տնօրէնը կը կանչէ զինքը.

— Եունչանսրդի՛, աղօթք ըրէ՛ սուլթանին կենացը:

— Լիֆէնտի, ես արդէն ամէն օր աղօթք կ'ընեմ իրեն համար:

- Չեզի ամենուր ընդհանուր ներում ըրաւ:
- Աստուած շատ կեանք տայ իրեն, Աստուած մէկ օրը հազար ընէ:
- Բայց մէյ մըն ալ այդ տեսակ սրիկայական դրծեր չպիտի ընէք հա՛:
- Ո՛չ, Լիֆէնտիս, ես միշտ սուլթանին հաւատարիմ քեզին եմ, ո՛չ թէ այդ անպիտաններուն չեմ հետեւիր, այլ եթէ ձեռքէս գայ ամենքն ալ կը սպաննեմ:

— Աֆէրի՛մ, քեզ տեսնամ:  
Տնօրէնին ձեռքը, փէշը, հողաթափը համբուրելէ ետքը դուրս կ'ելլէ մեր բանտարկեալը: Ա՛լ ազատ է: Եունչը կ'առնէ կամ Յունաստան, կամ Կիպրոս, կամ Երիտասարդացիներու հիմա հերոս մըն է անիկա ու կաթնած իր հերոսութեան քաղքէ քաղքը կը պտըտի ստակ հաւաքելու իրեն համար:

Արդարեւ մարտկանութեան հերոս մը...  
Այդ կարգէն կը նաեւ վարդհոգեանը, ու ասոր համար երբ խօսիլ սկսաւ, ես արդէն հեռացած էի:



Սակայն քանի մը օր ետքը բարեկամներէս մէկը ըսաւ ինձի.

- Տեսնուէ՛ անգամ մը վարդհոգեանին հետ, հետաքրքրական տիպար մըն է որ կ'արժէ ուսումնասիրել:
- Անտանելի է, եղբայր:
- Գիտեմ որ անտանելի է, բայց միմիայն ի սէր արուեստին, ի սէր զրականութեան ըրէ՛ այս բանը, պիտի քարեկամ խնդալով. հաւատա՛ որ օղտակար զործ մը ըրած կ'ըլլաս եթէ այդ տեսակ տիպարներ քիչ մը փորձես հասարակութեան ճանչցնել: Գիտեմ որ վարդհոգեանի հետ ժամ մը տեսնուելով մեծ զահոգութիւն մը պիտի ընես, բայց յանուն հայրենասիրութեան, յանուն յեղափոխութեան ըրէ՛ ասիկա: Ապագայ սերունդը քեզի հերոսի տիպարը պիտի տայ ապահովապէս այդ անձնուրութեանը համար եւ, ո՛վ գիտէ, գուցէ Քաղէշի կամ Երզրու մի հրապարակներէն մէկուն մէջ արձանի կանգնէ:
- Այդ հեռագրակները շլացուց զիս ու ահա՛ ասոր համար վարդհոգեանին հետ Երբիֆ փաշայի փողոցէն միասին կ'երթայինք դէպի կայարան:

- Ի՛նչ պիտի ընես Գահիրէ, հարցուցի իրեն, խօսք մը ըրած ըլլալու համար:
- Որ մենք հերոս պէտք է տեսնենք քննենք եւ ուսումնասիրենք ամէն բան մեր աչքով, պատասխանեց վարդհոգեան կաշտ ու ինքնալստահ արտասանութեամբ մը: Ասիկէ զատ, աւելցուց, ժողովուրդը պէտք ունի քաջալերութեան, պէտք է տեսնայ իր հերոսները եւ քաջալերուի:
- Իրաւունի ունիս:
- Իմ կեանքս ժողովրդին նուիրուած է, իմ բազուկս հայ ազգին կը պատկանի: Մինչեւ հիմա արեւնս իմ ազ-

զիս համար թափեցի, ասկէ ետքն ալ...

—Մի՛ յուզուիր, կ'աղաչեմ, եւ մի՛ շարունակեր, ասկէ ետքն ալ ազդին համար պիտի թափես, զիտեմ: Կեցցե՛ս, շա՛տ ապրես, Աստուած ձեզի պէտեղը պակաս չընէ:

—Ամէն, զոչեց Վարդհոգեան սրտին խորէն, ու հասանք կայարան:

Դեռ կէս ժամ կար կառախմբին մեկնելուն. պէտք էր խօսիլ տակաւին կէս ժամ Վարդհոգեանի հետ: Յանուն հայրենասիրութեան այդ ալ ըրի, ու ասկէ ետքը եթէ զիս Հոյի զիցազնին քով չգասեն՝ յանցանքը իմս չէ:

—Մենք որ պէտք եղածին չափ ուժ չունինք մեր թշնամիին հետ կուուելու համար, ըսի իրեն երբ տսմասկը աննկէ ետքը կայարանին երկայնքը կը պատուէինք:

—Ուժ չունինք, հապա այս բազուկները, միթէ բաւական չն՞, ու հարիզոնական ձեւով բարձրացուց իր երկու թեւերը:

—Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, անապարեցի ըսել, միայն թէ՛ գոնէ երկու երեք հատ ալ ըլլար այդ բազուկներէն, այն ատեն բոլորովին ապահով կրնայինք ըլլալ մեր ազատութեան համար:

—Իբրտունք ունիս, պատասխանեց Վարդհոգեան, ափսոս որ ինձի պէս մէկ քանի հողի չի կայ: Ա՛խ, պարոն, եթէ անդրանիկ ազաս քիչ մը աւելի սեժ ըլլար...

—Աւա՛ղ:

Ու այսպէս խօսակցութիւնը տեւեց մինչեւ որ կառայարանի մեկնելուն ժամը հասաւ:



Երբ Գոհիբէ գացի շարժմ մը ետքը, Վարդհոգեան օրուան մարդն էր հոն, կամ աւելի ճիշդը, ամսուան հերոսը, որովհետեւ ամէն ամիս իր հերոսը սնէր այդ միջոցին: Հայկական սրճարանը բազմած կը խօսէր անիկա, աստուընէ մինչեւ իրիկուն եւ իրիկուրնէ մինչեւ կէս զիշեր:

—Որ մենք հերոս այսպէս, որ մենք հերոս այնպէս:

Ճշմարտութեան սիրոյն համար եւ ի պատիւ իրենց պէտք է ըսել սակայն որ իր շարժը բոլորուողները պանդուրներ չէին, ո՛չ ալ ապուշ հիացողներ, այլ բաւական «հերոս»ներ ակրանուն զարկած ու անսոց արժէքը ճանչցած մարդիկ, որոնք միմիայն ժամանցի համար խօսեցնէ կուտային զինքը: Ա՛լ իրենց համար հերոս մը անսակ մը անպարտ էր որ ձրի ներկայացումներ կուտար հայկական սրճարանին մէջ եւ երբ նոր հերոսի մը գալուստը իմանային Գ. հիբէի մէջ, կ'ըսէին իրարու:

—Վաղը, ժամը տասնին, հայկական սրճարանը եւ կէք, հերոսական ներկայացում կայ:

Եւ ասիկա այնչափ շահարեր էր սրճարանին համար որ սրճարանապետը ձրի սենեակ ու կերակուր կուտար ամէն բանտէն ազատած հերոսի:

Ես ալ գացի այդ «ներկայացում»ներէն մէկուն: Վարդհոգեան նստած էր սեղանի մը վերի կողմը որուն շարժն ու վրան հաւաքուած էին ութ դաւաթ օղի, ժամկոչ մը, սիսեռի մեզէ, ծխալաճառի աշկերտ մը, սարսիլա, ցնդած

բանաստեղծ մը, խաշած հաւիթ մը, քանի մը հատ ձիթապտուղ ու քանի մը հատ ալ պարսպ պղտուղ զալթակահոններ:

Երբ ներս մտայ Վարդհոգեան արդէն կը ճառէր:

...—Այո՛, սիրելի ընկերներ, միութիւն եւ համերաշխութիւն: Մենք իբրեւ հերոս եւ իբրեւ ժողովուրդի հարգաւոր ներկայացուցիչ, պէտք է ընենք այդ բանը, պէտք է միացնենք յեղափոխական կուսակցութիւնները եւ յետոյ միացնենք իրարու հետ նաեւ եւրոպական տէրութիւնները: Պէտք է երթանք Բարիկ եւ Լսնաոն, խորհրդակցինք բարձրաստիճան անձերու հետ եւ այս բանը ընենք:

«Մենք»ը միմիայն ինքն էր: Վարդհոգեան երբ կը խօսէր, կը կարծէր թէ ամբողջ լեզունի մը կողմէ կը խօսի: Իր ծիծաղաշարժ մեծամտութիւններուն փոքրագոյններէն էր աս:

Սեղանակիցներէն մէկը, Կեղանականի նախկին աշակերտ, որ առիթ չէր փախցնէր թեթեւ ծաղրանքներ ընելու երբ ձեռքը այս սեսակ հերոս մը իյնար, ոտքի ելաւ, լուրջ, պաշտօնական, օղիին դաւաթը բարձրացուց եւ ըսաւ:

—Պարոն Վարդհոգեան, այսօր մեզի համար նշանաւոր օր մըն է. անոր յիշատակը անջնջելի ոսկի տաւերով պիտի քանդակուի մեր ամենուս սրտին մէջ, որովհետեւ մեր աչքերը անսան հայոց մեծ հերոսը, անդրանիկ հերոսը, ժամանակակից Հոյի զիցազնը, սրուն քաջազորութիւնները թէեւ ծածկուած մինչեւ այսօր, սակայն տիեզերքը կը զարմացնեն արդէն: Կը պարպեմ այս դաւաթը պարոն Վարդհոգեանի կենաց:

Պարպեց ու նստաւ տեղը. — «Իրամամբ ըրի որ ինքն ալ ելլայ բան մը խօսի» փսփոսաց ակնաջիւղ:

Բաժակաճառին անմիջական արդիւնքը եղաւ սրճարանը գանուսող ուրիշ տասնի չափ հայերու մեր քով հաւաքուիլը, թէեւ յաճախորդներուն մեծամասնութիւնը կը շարունակէր նորա խաղալ:

Վարդհոգեան զգաց որ «ժողովուրդ»ը զինքը լսել կ'ուզէր: Կանգնեցաւ, երկու ձեռքը սեղանին կը թնցուց, կամաց մը օրօրուիլ սկսաւ, խիթ ունեցողի մը ձեւով, բիշ մը ջուր խմեց, քիթը խնջեց, ու վերջապէս, յամբ յամբ, բառերը երկնցնելով, յախտեհապէս լալկան շեշտով մը խօսիլ սկսաւ:

—Սիրելի եւ անկեղծ ընկերներ, մենք լստահ ենք որ քիչ ատենէն պիտի հասնինք մեր ցանկացած ազատութեան եւ մեր սիրելի հայրենիքը երթանք: Այս մասին արդէն խօսած եմ մի քանի բարձրաստիճան անձերու հետ, սիրելի եւ անկեղծ ընկերներ: Որ մենք հերոս պէտք է որ այդ բանը ընենք, սիրելի եւ անկեղծ ընկերներ: Ա՛խ, ափսոս, ափսոս որ այս բազուկները եթէր տարի անդործ մնացին:

Եւ Վարդհոգեան ցոյց տուաւ այն բազուկները որոնք արդէն սեսած էի Ալեքսանդրիա, կայարանին մէջ: Ապա շարունակեց:

— Սիրելի եւ անկեղծ ընկերներ, վեսս չունի, այդ կորսուած ժամանակը շուտով կը շահինք: Այս բազուկները ձեզի նուիրուած են, վասնզ Ելիք, սիրելի եւ անկեղծ ընկերներ:

Նորէն բարձրացան Ալեքսանդրիայի մէջ տեսած բազուկներու:

— Կեցցէ՛ պարոն Վարդհոգեան:

Եւ օղինքը պարզուեցան:

Արտառոց ու ծիծաղաշարժ էր այս ամենքը, սակայն, չեմ գիտեր ինչո՛ւ, սրտի սեղմում մը զգացի զուրո ելած միջոցիս: Պ եզալի ու միանգամայն տխուր տպաւորութիւն մը ըրած էր վրաս ամբողջ այդ «ներկայացում»ը:

\* \* \*

Վարդհոգեան բաւական ժամանակ մնաց Գսէիքէ եւ մէկ կողմէն հայկական սրճարանը հերոսական ներկայացումներ տալով հանդերձ, միւս կողմէն քառսուն ոսկիի չափ զրամ հաւաքեց հարուստներէն՝ մուրացկանութեամբ — «Որ մենք հերոս», պէտք է ընենք այդ բանը» — ըսելով:

Վարդհոգեան այն տեսակ տիպարներէն էր որ իրեն հետ քանի մը անգամ ծանօթութիւն ընողը զգուսնքով կը հեռանար, ա՛լ մէջ մըն ալ հետը չտեսնուելու հաստատ մտադրութեամբ, այնպէս որ ամիս մը ետքը պարագութիւնը տիրած էր շուրջը: Նոյն իսկ շատեր հայկական սրճարանը չէին երթար անոր չհանդիպելու համար, այնպէս որ սրճարանին տէրը պատշաճ դատած էր անուշուութեամբ ճամբու գնել զայն ըսելով:

— Ասկէ ետքը ա՛լ չեմ կրնար սենեակ ու կերակուր տալ քեզի, գլխուդ ճարը նայէ՛:

Այդ վերջնապիւն՝ Վարդհոգեան պատասխանած էր հանդարտութեամբ.

— Ուրեմն որ մենք հերոս, պէտք է երթանք Ալեքսանդրիա:

Ու պայուսակը կապելով մեկնած էր այդ «հերոսամերձ» քաղաքէն:

Քիչ ատենէն ետքը, երբ Ալեքսանդրիայի Հայերն ալ բաւականէն աւելի ճանչցած ու ճանձրացած էին իրմէ ուսմէն մարդ սկսած էր մասնաւոր փութկոտութեամբ մը փախուստ տալ ամէն անգամ որ «հերոս»ը կ'երեւնար Մէնչիէի հրապարակին վրայ, Վարդհոգեան զգաց թէ ժամանակն է «որ մենք հերոս»ը պայուսակը կապէ նորէն, ու մեկնեցաւ դէպի Եւրոպա:

— Պէտք է երթանք Եւրոպա, կ'ըսէր մեկնած օրը, եւ տեսակցինք բարձրաստիճան անձերու հետ մեր ազգային փրկութեան մասին:

«Մեր ազգային փրկութեան մասին տեսակցիլ բարձրաստիճան անձերու հետ»ը, ըստ Վարդհոգեանի, կը նշանակէր երթալ ու իրեն համար զրամ մուրալ: «Տեսակցութիւն»ը 35-40 ոսկի բերաւ իրեն: Ուրախ էր

Վարդհոգեան եւ Բարիզէն կը գրէր իր ծանօթներուն. «Անկեղծ ընկերներ, մեծ քաջալերութիւն կը գտնամ այստեղ եւ կը յուսամ որ ազգային փրկութեան օրը մեր յուսացածէն շուտ պիտի հասնի: Ե՛յլ ի՞մ շուտ նկարհերուս վաճառումէն մի շահ զոյացաւ, խնդրեմ անմիջապէս զըրկեցէ՛ք բոսթայով:»

Այս զրամը զինքը բաւական ատեն ապրեցուց Ելիպտոսի մէջ՝ ուր վերադարձած էր: Յետոյ ժամանալը եկաւ նորէն «տեսակցելու բարձրաստիճան անձերու հետ»: Այս անգամ սակայն քիչ մը հեռու պէտք էր երթալ նոր որո գտնելու համար:

— Որ մենք հերոս, պէտք է երթանք նաեւ մեր ուսուցչայ անկեղծ ընկերներու մօտ:

Ու ահա՛ Վարդհոգեան կը մտնար շոգենաւ:

Այդ տուաքելութիւնը յուսացուած արդիւնքը չտուաւ կարծեմ, որովհետեւ շուտ վերադարձաւ:

— Ծօ՛, կե՞նք մի եկար...:

Այս անգամ այդ բառերով ընդունած էին զինքը անոնք որ տարի ու կէս առաջ օրերով պատրաստութիւն կը տեսնէին արժանաւայել ընդունելութիւն մը ընելու համար: Հայոց «անդրանիկ հերոս»ին: Խեղճ Վարդհոգեան, ինք ալ Արտաշէսի պէս կրնար գոչել ՝ «Աւաղ փառացոյ անցաւ արի»:

\* \* \*

Վերջին անգամ, երեք ամիս կայ, Ալեքսանդրիայի մէջ տեսայ զինքը: Փետուրները թափած էր բոլորովին: Ամէնէն լքուած ու արհամարհուած՝ արտում տխուր կը թափառէր փողոցները: Հիմակ Հայաստանը փրկելու համար ծրարիրներ չունէր, ո՛չ ալ իր բազուկներուն ներքողը կը կարդար: Չէ՛, պարզապէս զոնապանութեան կամ ծառայութեան պաշտօն մը կը փնտռէր հացը ճարելու համար ու չէր գտնար:

Լինցած էր «որ մենք հերոս»ը:

\* \* \*

Եւ սակայն ահնդ սպառնալիքի մը պէս զեռ ականջիս կը հնչեն Եւրիֆ փաշա փողոցէն կայարան դացած միջոցնուս Վարդհոգեանի ըրած խօսքերը.

— ...Քայց մեծը հրաշալի բան է, ճի՛շդ ինձի կը նըմանի:

Ուրեմն, ափսո՛ս, ապագայ սերունդն ալ իրեն Վարդհոգեանը պիտի ունենայ...

ՎԱՀՐԱՄ

### ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

«Նոր կեանք»ի ներկայ թիւը տպագրութեան յանձնելու ատեն, Բարիզէն գոյժ մը անբացատրելի տխրութեամբ կը լեցնէ մեզ: Նուպար փաշան ոչ եւս է: Լօրիս-Մէլիքոֆէն ի վեր, մեծագոյն Հայն է որ կը բաժնուի մենէ: Ուժ մըն է որ կը պակսի ընդհանուր Հայութենէն, էն զի զեցիկ եւ էն փայլուն ուժերէն մին մեր ցեղին, ու աշխատէի մէջ մեր գրաւած դիրքը նուազում մը կը կրէ ատով:

«Նոր կեանք»ի յատուցիկայ թիւին կը թողունք խօսիչ երկարօրէն իր վրայ, իր կատարած գերին վրայ, ու ճանչցնել եւրոպական մամուլին կարծիքները իր մասին: Ան այժմ կը շատանանք ներկայացնելով երկու յօդուած գործը թայնզի ու Տեյլի Թեյեկրաֆի մէջ հրատարակեցին իր բարեկամներէն երկուքը, Պ. աը Պլալից և Պ. Լաուրրա Տայսէ, ինչպէս եւ Թանէի եւ Ֆիկաւոսի յօդուածներուն զխաւոր մասերը:

Երէկ Նուպար փաշայի ընտանիքին ստացած մէկ հեռագիրը կ'ըսէր. «Մեծ կեանք մըն է որ կը դադրի. մեծ իմացականութիւն մըն է որ կը մարի: Կրնաք հպարտ ըլլալ իր յիշատակովը:» Այս հեռագիրը լաւ կ'անփոփել Նուպար փաշայի կեանքը, գործը, եւ իր ճիշդութիւնը ձեռք բերած արդիւնքը: Ընդհանրապէս կը կարծուի որ 74 տարեկան էր, մինչդեռ իրօք — եւ իր վարած բազմաթիւ ու բարձր սլաշտօնները կը բացատրեն ասիկա — ութսունը անցած էր: Բայց հասակը շիտակ ու բարձր մնացած էր, արբանքի թարմ ու փայլուն մոյնքովը, զրաւիչ ժպիտով մը, եւ իր արեւելեան աչքերուն մէջ խորունկ ու ակտիւ ժական նայուածքով մը որ իր մտաւորական սրութիւնը կը բողբոկէր պարզութեան երեւոյթով մը: Գրեթէ մինչեւ վերջը, նոյն իսկ ահաւելի տառապանքներու մէջ, իր խօսակցութիւնը շահեկան մնաց: Եւանդաւտ ուշագրութեամբ հետեւած էր Սուտանի արշաւանքին, կանխատեսած էր անոր գծաւորութիւնները եւ դուշակած էր յաջողութիւնը, եւ խանգալաւորութեամբ կը դժէր Սուտանի նոր կայսրութեան ապագան: Մնաց որ, ինք կը ճանչնար այդ երկիրը, սրովհետեւ իր եղբայրը բաւական ատեն խարթում մնացած էր իր կառավարիչ, եւ Նուպար ինքն ալ բաւական ատեն կեցած էր հոն անոր հետ: Սուտանի երկրակալութեանը կը սպասէր՝ անոր հողին բեղմնաւորումովը:

Յաճախ ինծի կը կրկնէր սա հակիրճ խօսքը որ իրեն համար ամբողջ եզրիպտական յայտագիրը կ'ամփոփէր. «Եզրիպտոսի երկու բան պէտք է որպէս զի մեծ ու բարդաւան ըլլայ — արդարութիւն և շուր:» Զրանցքներու դրութեան մէջ եղած բարեօրոյթները մեծ գոհունակութիւն կը պատճառէին իրեն, եւ մինչեւ վերջը հպարտ էր խառն

Դատարաններուն համար, զորոնք ինք հաստատած էր ամբողջ Եւրոպայի ընդդիմութեանը եւ չկամութեանը հակառակ: «Վստիորի եզերքին վրայ Իսլամութեան հաստատուելն ի վեր, կ'ըսէր, Մահմետականը 20 անգամ Եւրոպան կործանման եզրը բերած է: Ուստի Եւրոպա, հարիւր տեսակ մակերեւութային միջոցներով, աշխատած է բռնել արեւելեան հիւանդութիւնը, եւ թէ՛ ինքզինքը ու թէ՛ օսմանեան կայսրութիւնը փրկել: Ատոր համար մէկ միջոց մը կայ, շատ պարզ միջոց մը. եւ սակայն Եւրոպան ատիկա ընդգրկած կամ նոյն իսկ մտքէն անցուցած չէ, — այն է՝ արդարութիւնը: Եթէ Թիւրքերուն տաք ոչ միայն արդարութիւն, այլ արդարութեան ըմբռնումը, ան ատեն կ'ազատէր թէ՛ Եւրոպան եւ թէ՛ Թիւրքիան:» Նուպար փաշա մինչեւ վերջը սրտանց կապուած մնաց Եզրիպտոսի, նախատեսելով անոր վերականգնումը եւ մեծութիւնը՝ արդարութեան հաստատումով և երկրազորում թեան վերականգնութեամբ: Մեծ եռանդով կը շահագրգռուէր իր Գահիրէի մօտ ունեցած ազարակին մէջ մտցուցած նոր ցանքերուն արդիւնքովը, ու անոնց յաջողութիւնը կ'ողջունէր՝ յաղթանակի աւետիսի մը պէս:

Սկիզբէն ցոյց տուած էր Անգլիոյ համար Վերին Նեղոսի վրայ հսկելու հարկը, ըսելով. — «Անգլիա պէտք չէ ինքզինքը ենթարկէ սա վտանգին որ առտու մըն ալ յանկարծ զրօշակ մը, յիսնապետ մը և շորս մարդ գտնէ հոն: Նոյն իսկ պէտք է Բարեյուսոյ Գլխուն վրայ հսկէ: Երբոր Անգլիոյ մէջ Մոլդաւիէի, Պալմիրի ու Չլավալէյի պէս երեք մարդ, եւ դուրսն ալ Գրոմբրի, Քիչընըրի ու Բօսի պէս երեք մարդ կը գտնուի, եթէ նոր կայսրութիւն մը չներկայացնեն իրենց երկրին եւ քաղաքակիրթ աշխարհին, թէ՛ իրենց և թէ՛ հանդիսատեսները յուսախար պիտի մնան:»

Պահ մը քիչ մնաց որ Նուպար գահ մը բարձրանար: Իստանբուլու եկաւ երբոր Պուլիարիոյ համար իշխանի մը ընտրութիւնը, զոր Պերլինի Վեհաժողովը վճռած էր, խորհրդակցութեան ներքեւ էր: Այն մարդ զիտէր թէ աերութիւնները շուարած էին թէ ո՛վ ընտրեն: «Ինչո՞ւ դուք ընտրելի չըլլաք, քսի: Լորտ Պիքընսֆիլա (Անգլիոյ պատուիրակը) իմ ներկայութեանս կը խօսէր իշխան կորչաքֆի և կոմս Եւլալոֆի (Ռուսիոյ պատուիրակները) եւ մեծապէս կը զրուատէր ձեզ, ու անոնք ալ նոյն կարծիքէն էին: Անտարաշի կոմսը (Աւստրիականացիոյ պատուիրակը) ձեզի հետ շատ ազէկ է, եւ Պ. Տիւֆոր ու Պ. Վատինկոն (Ֆրանսայի պատուիրակները) շատ մեծ դադախար ունին ձեր պետական մարդու յատկութիւններուն մասին: Գոյլով Գերմանիոյ, վաղը կը հասկնամ թէ ո՞րչափ յոյս գնելու կը իր վրայ: Եթէ Գերմանիա նպատակաւոր ըլլայ, Թիւրքիան միայն պիտի ունենաք ձեզի դէմ, բայց նոյն իսկ կ. Պալիս ձեզի ազէկ աչքով կը նային՝ հոն ձեզի յանձնուած գործը յաջողութեամբ ի դրլուս հանելուը համար:» Նոյն իրիկունը Հոնկուն իշխանին հանդիպեցայ թատրոնի մը մէջ, եւ միջնաբարններուն այս գործին մասին խօսեցանք օթեակին մէջ: Գալա

փարը իրեն զիւր եկաւ: Յաջորդ օրը խօսեցաւ Պ. Տիւֆ-  
րի, Պ. Վաստինկոյնի եւ լորտ Լայընսի (Քարիզի անդլիա-  
կան զեպպանը), ու յետոյ գործը հաղորդեց Պիլմարը իշ-  
խանին, որ ծրագրին աննպաստ ընդունելութիւն չըրաւ:  
Ընդհակառակը:

Գծրադպարար Նուպարի համար, եւ կը համարձակիմ  
ըսել ամէնուն համար, իր Կ. Պոլսոյ թշնամիները, իմա-  
նալով իր ընտրելութիւնը, հրապարակեցին զայն՝ զեռ  
Ռուսիոյ կարծիքը իրապէս չհարցուած, եւ անոր առջեւ  
խոչընդոտներ յարուցին: Յաճախ կը տեսնէի զինքը այս  
խորհրդակցութեանց միջոցին: Ենթահայարաւ էր ինծի՝  
առած քայլերու համար եւ մինակ եղած ասաննիս իր այդ  
մասին կազմած երազները կը հաղորդէր ինծի: Երբէք  
այնքան մեծ հաճոյք զգացած չեմ որչափ երբ Նուպար  
իւր յատակագիծները եւ յոյսերը կը պարզէր: Կը հաւա-  
տամ որ, եթէ իր ընտրելութիւնը յաջողէր, Պալքանեան  
Թերակղզին իր մեծութեան եւ բարօրութեան լաւագոյն  
օրերուն այնպիսի մէկ վերակենդանացումը պիտի տեսնէր,  
որ լսի յիշատակ մըն է իր մէկ քանի պետութեանց հա-  
մար եւ անձանօթ բան մը՝ միւսներուն համար: Կը հա-  
ւատամ որ ո՛չ հայկական ջարդերը պիտի ունենայինք ո՛չ  
թիրքեւհեղին պատերազմը, եւ թէ Վառնայէն Չլթինեէ  
երկու մեծ պետութիւն, բացի Ռուսմանիայէն, այսօր իրենց  
մէջ բա՛նա՞ծ պիտի ըլլային թերակղզին, Ռուսիոյ թողով  
իւր խօշոր բաժինը, առանց զոհելու ազատութիւնը կամ  
արդարութիւնը զոր Նուպար աչքի առաջը ունէր: Յուսա-  
խարութիւն մը կը կրեց երբ ծրագրերը ի զերեւ ելաւ, բայց իր  
իմաստասիրութիւնը, միացած իր քրիստոնէական ոգւոյն  
եւ արեւելեան համակերպութեանը, իրեն թոյլ չտուաւ որ  
զաննանայ:

Խորապէս վշտակրած էր իր Զիպա ազջկանը (տիկին  
Տիգրան փաշա Ապրօ) մահուընէն, որովհետեւ իր ընտա-  
նիքին համար ունեցած սէրը շատ ուժով էր, եւ իր ընտա-  
նիքն ալ, իր կիներ ի զլուխ, զորովանքով ու սքանչացու-  
մով լի էր իրեն համար: Այդ թուականէն ի վեր իր կեան-  
քը անցաւ պաշտօնավարութեամբ, զեզը քաշուելով եւ  
Քարիզ այցելելով, ուր Պուասիէն փողոցի տունը գնած էր  
ուր մեռաւ: Հոն կ'ընդունէր Հայաստանէն ու Երիւստանէն  
բոլոր եկողները: Աւելի հաւատք ունէր Հայերուն քաղա-  
քական ընդունակութեանը քան Նեղոսի հոլտին կառա-  
վարութիւնը երիւստական ցեղին յանձնելու կարելիու-  
թեանը, եւ երբ Աղքեսանդրիացի կամ Գահիրէցի ինքնօ-  
րինական մը բացագանչէր՝ «Երիւստոսը Երիւստացինե-  
րուն», ուսերը կը թափուէր ու կ'ըսէր. «Երիւստացի՛ չի  
կայ:»

Ահռելի հիւանդութիւն մը ունեցաւ, եւ ծանր գործու-  
ղութիւն մը կրեց: Փրանսացի մեծ վիրաբոյժը, Տր. Բոզզի,  
որ, Տր. Պերմի հետ, կատարեց զայն, ըսաւ ինծի. «Մեր  
պարտքն էր գործողութիւնը կատարել, բայց մեր տխուր  
համոզումն է թէ ցաւազին կեանք մը պիտի ունենայ եւ մէկ  
քանի ամիսէն պիտի ընկնի:» Գուշակութիւնը իրականա-  
ցաւ այժմ: Կարեկցելու է իր ընտանիքին, որուն համար,

նոյն իսկ առաւապանքէն ջախջախուած, պարծանք մը ու  
սիրտանք մըն էր, բայց իրեն համար, ինչպէս իր սրբին  
Պօղոս կը զրէր ինծի, մահը ազատում մը եղաւ:

(Թայմզ)

Օ. ՏՐ ՊԼՈՎԻՑ

Աւելի քան բուն տարի առաջ է որ ճանչցայ Նուպար  
փաշան: 1876ին, Գէյլ պատուիրակութեան Երիւստոս  
գտնուած տարին, ներքին գործերու նախարար էր, եթէ  
չեմ սխալիր: Այցելութեան շարժառիթը հետաքրքրական  
լոյս մը կը սփռէ Խամայիլ փաշայի թուականին Երիւստո-  
սին եւ անդլիական գրաւման Երիւստոսն տարբերութեա-  
նը վրայ: Հարաւային մեծ երկաթուղին, որ հիմա զրեթէ  
անընդմիջաբար մինչեւ Ալպարա կ'երթայ, ան ատեն  
մինչեւ Մինիէ միայն կ'երկարէր: Փափաքելով մայրաքա-  
ղաքը ու շրջակայքը ուսումնասիրելու աւելի ծանօթանալ  
Երիւստոսի, խորհեցայ որ պէտք է այցելեմ Մինիէն, որ  
ան ատեն Տէլզային հարաւակողմը մը գտնուած միակ կա-  
րեւոր քաղաքն էր երկաթուղիով Գահիրէի միացած: Այս  
առաջադրութիւնը աչքի առաջ ունենալով՝ այցելութեան  
գոցի Նուպար փաշային՝ իր աջակցութիւնը ինդրելու:  
Այսօր Անդլիացիի մը համար նոյնքան անհեթեթ պիտի  
պիտի ըլլար երիւստացի նախարարի մը այցելել՝ Լուքսոր  
երթալու զիրութիւններ ձեռք բերելու նպատակաւ, սքան  
Անդլիա գտնուող օտարականի մը համար ներքին գործերու  
նախարարին զիմել՝ տեղեկանալու համար թէ Լանտնէն  
Լիվրբուլ երթալու լաւագոյն եղանակը ո՛րն է: Ան ատենը,  
սակայն, ամէն բան խտրվին կը հարցուէր, եւ որովհետեւ  
ծանօթ էի իբր յաճախակի այցելու մը Երիւստայի պալա-  
տը՝ ուր զեանդուած էր Գէյլ պատուիրակութիւնը, ինծի  
խորհուրդ տուին որ լաւագոյն էր առաջադրութիւնս հա-  
զորդել ներքին գործերու նախարարին: Երեսն օր հար-  
մըն էր ատիկա: Այցելութեանս նպատակը յայտնելուս  
պէս, տեսայ որ առաջարկութիւնս հաճելի չեղաւ: Նուպար  
ամէն տեսակ զժուարութիւններ շարեց առջիս, որոնցմէ  
էն լաւ յիշածս սա է թէ բնակութեան տեղ մը չի պիտի  
կրնայի գտնել Մինիէ, եւ ինծի խորհուրդ տուաւ ճամբոր-  
դութիւնս թողալ աւելի ետքի, որ ատեն ինքն ալ հաւա-  
նօրէն զեան ի վեր պիտի ելլէր իր շոգենաւակով եւ շատ  
ուրախ պիտի ըլլար զիս իրեն ընկեր ունենալով: Ակնհերեւ  
էր թէ այդ ատեն Մինիէ երթալ չէր ուզեր, եւ ասոր  
պատճառը ետքէն հասկցայ: Թէպէտ զեռ պաշտօնի զլուխ  
էր, սակայն խտրվը կասկածոտ աչքով կը նայէր իրեն, եւ  
Նուպար արզէն կը գուշակէր Խամայիլի հետ խղումը որ  
յաջորդ տարին տեղի ունեցաւ եւ որ վերջէն Խամայիլի  
անկմանը պատճառ եղաւ: Այս ու այն պատճառով Պ.  
Գէյլ ինքն ալ յարաբերութեան մտած չէր Նուպարի հետ,  
որ ան ատեն — կամ, անշուշտ, ոչ մէկ ատեն — շատ  
ընդունելի չէր Երիւստոս գտնուող անդլիական իշխանու-  
թեանց, եւ հետեւաբար զիրաւ կ'ըմբռնեմ որ Նուպար,

իրը խտիրին մէկ նախարարը, չուզէր զիւրացնել ճամբո-  
րութիւն մը որ կրնար փոխարքային շահերուն հակառակ  
նկատուիլ Ապտինի պալատին կողմէ, ըստ որում Իսմայիլի  
նպատակն էր անգլիական պատուիրակէն ծածկել ո՛չ մի-  
այն եզրիպտական բացին ամբողջ բանակութիւնը, հապա-  
աւելի այդ բացին մինչեւ ո՛ր աստիճան իր անհատական  
քաղաքականութեանը հետեւանք ըլլալը :

Նուպար այդ միջոցին կը բնակէր այն տունը ուր ապ-  
րեցաւ մինչեւ վերջը որ ատեն որ Եզրիպտոս զտնուէր :  
Տունը ան ատեն գրեթէ քաղքէն զուրս էր, երկաթուղիի  
կայարանին ճամբուն վրայ : Հանրային ընդունելութիւն-  
ներուն՝ այցելունները կ'ընդունէին զրան մեծ գաւիթին  
մէջ . բայց բարեկամները Նուպարը միշտ կը գտնէին իր  
աշխատութեան սենեակը, ուր կը նստէր զրբերով, լրա-  
զիրներով ու նամակներով շրջապատուած, կարգալով՝  
երբոր չէր խօսեր, ու գրեթէ անընդհատ սիկառէթ ծխելով՝  
արթննալէն մինչեւ անկողին մտնելը : Երբ զինքը առաջին  
անգամ տեսայ, տակաւին իրաւունք ունէր կրելու այն  
« ազուր Նուպար » (ըստ Նիշպար) անունը որ երի-  
տասարդութեանը իրեն տրուած էր : Արեւելցիները ընդ-  
հանրապէս տարիքոտ կ'երեւին՝ երբ դեռ երիտասարդ են,  
ուստի կրնայ ըլլալ որ հաշուիս մէջ սխալած ըլլամ, բայց  
մեր բարեկամութեանը սկիզբը՝ ինծի թուեցաւ յիսուննոց  
կամ ատ տեղուանքը մարդ մը, տակաւին տարօրինապէս  
զեղչեցիկ : Իր սեւ մազերը հազիւ տեղ տեղ մոխրոտած էին .  
մարմինը, թէպէտ նոսրղական կեանք վարած մարդու մը  
մարմինը, աշխոյժ ու ճապուկ էր . իր զիմազիծները պայ-  
ծառ ու որոշ, եւ նշանաւոր անհատականութիւն մը ար-  
տայայտող : Իր բոլոր ցեղակիցներուն պէս, Նուպար կը  
սիրէր շեշտել սա իրողութիւնը կամ տեսութիւնը թէ Հայե-  
րը հնդեւրոպական ծագում ունին եւ ո՛չ սեմական . բայց  
ես կ'երեւակայեմ թէ սեմական արեան առատ խառնուրդ  
մը կայ ամէն հայ ընտանիքներու մէջ : Նուպարի դէմքին  
ուշադրաւ կ'էտն էր խոշոր, վճիտ, տամուկ աչքերուն գե-  
ղեցկութիւնը : Իմացած եմ թէ Պարսկաստանի մէջ վիթի  
աչք կ'անուանեն այս տեսակ աչքերը : Եթէ այդպէս է,  
ոչ մէկ ածական կրնայ աւելի լաւ որակել անոնց արտա-  
սովոր հրուպոյրը : Մինչեւ վերջը, երբ ալ կ'բաժ, խորշո-  
մած, յոգնած, ալիւտրած ու ծերացած էր, աչքերը կը  
պահէին իրենց նախկին գեղեցկութիւնը :

1877ին էր որ նորէն հանդիպեցայ Նուպարի Եւրոպա,  
եւ մեր ծանօթութիւնը աճեցաւ ու փոխուեցաւ բարեկամու-  
թեան մը որ անվթար մնաց մինչեւ իր կեանքին վախճա-  
նը : Այդ միջոցին Նուպար, թէպէտ կարծեմ բաց է բաց  
վտարուած չէր, լաւագոյն սեպած էր Եզրիպտոսէն մեկնիլ :  
Կարելի չէր ալ աւելի երկար ատեն արգիլել ելմտական  
տազնապէն պայթումը, ու, վերջին պահուն, Իսմայիլ,  
ժամանակ շահելու համար, հաւանած էր Միջագոգային  
Քենիչ Յանձնաժողովի մը անուանմանը : Իր նպատակն  
էր Եւրոպայի հաւատացնել թէ իր զրամական անձկութիւնը  
զլխաւորապէս հետեւանք էր եզրիպտական փոխառութիւն-  
ները եւրոպական հրապարակներուն վրայ տեղաւորած

սեղանաւորներուն տարապայման շահերուն, Դրան զօշա-  
քաղութեանը և իր աննելիքներուն անխիղճ ընչաքաղ-  
ցութեանը : Նուպար սակայն զիտէր ճշմարտութիւնը, եւ  
կը բաղձար որ այդ ճշմարտութիւնը ճանչցուր անգլիական  
հասարակութենէն : Իր խօսքով, Եզրիպտոսի մօտալուստ  
սնանկութեան իրական պատճառը սա էր թէ Իսմայիլ երկ-  
րին ամբողջ հասոյթը իւրացուցած էր իր անձնական գոր-  
ծածութեանը համար, եւ ալէն ձախէն զրամ փոխ առած  
էր՝ յաջողցնելու համար իր Եզրիպտոսի հողին միակ տէրը  
ըլլալու յիմար փառասիրութիւնը : Իմ վաղեմի բարեկա-  
միս, Սըր Չարլզ Բիւլըրը Ռիլընի (որ անգլիական կա-  
ռավարութեան կողմէ պաշտօն ստացած էր առաջ տանե-  
լու քննութիւնները զորոնք Պ. Գէյլ ժամանակ ունեցած  
չէր աւարտելու) խորհրդով, Նուպար ինծի հետ հաղոր-  
դակցութեան մտաւ եւ ինչ ինչ տեղեկութիւններ մատա-  
կարարեց, զորոնք հրատարակեցի « Նայնթիւթ Սէնդի-  
ուրի » ի մէջ 1877ի վերջերը կամ 1878ի սկիզբը : Յի-  
շեմ այստեղ թէ այդ թուականին Նուպարի եւ իմ միջե-  
զոյցացած տեսակ մը ընկերակցութեան ատեն, անհունա-  
պէս զարմացայ այն ծանօթութեանը զոր ունէր անգլիա-  
կան նկարագրին, անգլիական գաղափարներուն եւ անգլի-  
ական քաղաքականութեան մասին : Անգլիներէն կրնար կա-  
տարելապէս կարգալ, բայց անգլիացի բարեկամներու խօսած  
կամ զրած ատեն՝ միշտ կը նախընտրէր ֆրանսերէն գոր-  
ծածել : Կրնամ ճշմարտապէս ըսել թէ Նուպար իմ ճանչ-  
ցած բաղձաթիւ օտարազգիներու մէջ այն քիչերէն մին է  
որ Անգլիան կը հասկնար՝ թէ իր թերութիւններովը եւ  
թէ իր արժանիքներովը : Խառնուածքով, կրթութեամբ,  
ցեղով եւ յարաբերութիւններով, անձնապէս աւելի կը  
համակրէր ֆրանսական սովորութիւններուն, գաղափար-  
ներուն, մտածելու եղանակներուն եւ մտաւորական մշա-  
կութեան, քան անգլիականներուն : Բայց, միս կողմէ,  
մեր անգլիական ուղղամտութիւնը, մեր անգլիական ըմ-  
բռնումը պարտականութեան, մեր անգլիական սէրը ար-  
դարութեան, մեր անգլիական յամառ արութիւնը, եւ մեր  
անգլիական հաւատքը՝ իրը աշխարհալար ցեղ մը մեր  
ունեցած գերին նկատմամբ, ուժեղապէս կը ներգործէին  
իր բնութեան մէկ մասին վրայ, եւ ի վերջոյ միշտ աւելի  
ծանր կը կռւէին քան իր ընդածին հակումը դէպի Ֆրանսա :  
Այն թուականին, իր գաղափարն էր թէ Եզրիպտոսի բա-  
րօրութիւնը ապահովելու լաւագոյն՝ եթէ ոչ միակ՝ միջոցը  
ան էր որ Անգլիա թեւաբկութիւն մը հաստատէր երկրին  
վրայ :

Իսմայիլ փաշա, խոյս տալու համար Քենիչ Յանձնա-  
ժողովէն զոր իր իշխանութեան զուլս մնալուն ազիտաբեր  
կը նկատէր — իրաւամբ, հաւանեցաւ հանրային պարտ-  
քին վարչութեանը ձգելու ընդարձակ հողերը զոր զրաւած  
էր իր եւ իր ընտանիքին անուանը, և այնուհետեւ երկիրը  
կառավարելու իրը սահմանադրական վեհապետ մը, խոր-  
հրակցութեամբ միջագոգային նախարարութեան մը որուն  
պետը պիտի ըլլար Նուպար : Կրնամ ըսել այստեղ թէ  
Նուպար այս գործին մէջ իրաւունք ունենալ կը կարծէր

զանգատելու անգլիական կառավարութեան վարժունքէն: Յաճախ ըսած է ինծի թէ Իսմայիլի առաջարկած պաշտօնը ընդունելէ առաջ, անգլիական կառավարութիւնը հարցափորձած էր թէ մինչև ո՞ր աստիճան կրնար յոյս ընել Անգլիոյ աջակցութեանը վրայ այն պարագային ուր Իսմայիլ փորձէր իր յանձնառութիւններէն փախուտ տալ, եւ թէ հաւաստիք ստացած էր թէ այսպիսի պատահակաւորութեան մը ատեն Անգլիա ի հարկին զինու զօրութեամբ պիտի միջամտէր: Նուպար-Ռիլարն-տը-Պլինիէր նախարարութեան պաշտօնի սկսելէն վեց ամիս չանցած, զինուորական ապստամբութիւն մը — զոր Փոխարքան քաջախերած, եթէ ոչ զրոյած էր — զիրենք տապալեց, ու անգլիական կառավարութիւնը թող տուաւ որ այդ պետական հարուածը կատարուի՝ առանց նոյն իսկ բացսրոշ բողոք մը բառնալու: Իմ համոզումս ան է թէ Նուպար կարծած էր աւելի վճռական խոստումներ ստացած ըլլալ քան ո եւ է անգլիական նախարար կրնար երբեք տուած ըլլալ: Ինչ որ ալ ըլլայ, յիշեալ դէպքէն յետոյ Նուպարի մտքին մէջ կասկած մնաց անգլիական պաշտօնական հաւաստիքներու մասին, եւ Եգիպտոսի անգլիական իշխանութեանց հետ իր յարաբերութիւնները նուազ սիրալիր ըրաւ քան որչափ կրնային ըլլալ այլապէս:

Կարելի է ըսել թէ Նուպարի բաղձանքը մինչեւ մէկ աստիճան իրագործուեցաւ երբոր Արապիի ապստամբութեան հետեւանքով Եգիպտոսը զբաւուեցաւ անգլիական զօրքերէն: Բայց ինչպէս կը պատահէ շատ մարդերու երբ սկանառես կ'ըլլան իրենց կեանքին նպատակին իրականացմանը, իր բաղձանքը իր ուզած կերպով չկատարուեցաւ: Իրեն իտէպը այն էր որ Եգիպտոս նոյն զիրքը ունենար ինչպէս Հնդկաստանի Բնիկ Պետութիւն մը՝ Անգլիոյ թեւաբարութեան ներքեւ, այսինքն թեւաբար պետութիւնը վարէր պետութեան արտաքին յարաբերութիւնները, բայց երկրին ներքին վարչութիւնը բնիկ տարրին թողուր, Անգլիոյ ներկայացուցչին վերին հսկողութեան տակ: Փոխանակ ասոր, Անգլիոյ կառավարութիւնը մէկ կողմէ մերժեց թեւաբարութիւն մը հոչակել ու այսպէս ազատել Եգիպտոսը միջազգային իրաւասութիւններէն որոնց ենթարկուած էր, ու միւս կողմէ՝ Եգիպտոսի անգլիական իշխանութիւնները ամէն կերպով միջամտեցին երկրին ներքին վարչութեանը, որ, տեսականին մէջ, կը պահէր իր կատարեալ անկախութիւնը:

Լիովին կ'ընդունիմ թէ Եգիպտոսի խնդրին Նուպարեան լուծմանը թեր ու վէ՛մ շատ բան կարելի էր ըսել: Ոչ ալ մտադիր եմ ուրանալու թէ իր հակակրօնութիւնը ընդդէմ անգլիացի պաշտօնականներուն միջամտութեանը այնպիսի զօրծերու մէջ զորոնք ինք բնիկ նախարարներուն իրաւասութեանը շրջանակին մէջ կը նկատէր, երբեմն անբանաւոր էր: Իմ փափաքս է միայն արդարութեան հարկը մատուցանել պետական մարդու մը զոր կարծեմ՝ աւելի մօտէն ճանչցած եմ քան ո եւ է մէկը իր անգլիացի ծանօթներէն: Մեր Եգիպտոսի անգլիական իշխանութիւնները, ամբողջութիւնը առնելով, անկարող

զանուեցան Նուպարը հասկնալու: Կրնայ ըլլալ որ Նուպար Եգիպտոսի մէջ իր ունեցած ազդեցութիւնը աւելի ուժով կը կարծէր քան ինչ որ էր իրօք, ե իր մատուցած ծառայութիւնները իր երկրորդ հայրենիքին՝ աւելի խոշոր կը նկատէր քան ինչ որ էին: Եւ սակայն, ինչ ալ ըսուի Նուպարի արժանիքը նուազեցնելու համար, իրողութիւնը սա է եւ կը մնայ թէ արդարութիւնը մտցուցած էր Եգիպտոս, թէ Իսմայիլի միահեծան պետութիւնը տապալած էր, թէ Արեւմտեան զաղափարներուն շատագուրը եղած էր Արեւելքի մէջ, եւ թէ ամբողջ արեւելեան աշխարհին մէջ՝ իր ժամանակին առաջնակարգ պետական մարդը եւ բարեկարգիչը կը նկատուէր: Բնականաբար այս ամէնուն գիտակից էր ինքը, եւ բնական է որ զգածուէր այն անտարբերութենէն որով իր կարծիքները կ'ընդունուէին յաճախ անգլիացի պաշտօնատարներէն, զորոնք ինք օտար կը նկատէր երկրի մը ուր իր ամբողջ կեանքը անցուցած էր եւ որոնք հակամէտ էին մոռնալու սա իրողութիւնը թէ Եգիպտոս Հնդկաստան չէր, եւ թէ Նուպար Երոպայի պետական մարդերուն աչքին այնպիսի դիրք մը ունէր ու այնպիսի համարում մը կը վայելէր որուն ո եւ է կերպով կարելի չէր որ հասած ըլլար երբեք Հնդկաստանի բնիկ պետութեան մը ո եւ է նախարարը:

Նուպար կը սիրէր ըսել թէ իր կեանքին կէսէն աւելին աքլորի մէջ անցուցած էր, զոր իրեն հարկադրած էր կա՛մ եգիպտական կառավարութեան ուղղակի հրամանը, կա՛մ իր անձին ապահովութիւնը: Կը յիշեմ որ անգամ մը, Իսմայիլի օրովը, հայրենակից մը, փափկանը կատուութեան պակասով մը որ Անգլիացիներուն յատուկ է, իմ ներկայութեանս ըսաւ նախկին նախարարապետին՝ իր առաւել կամ նուազ կամովին Եգիպտոսէն մէկ բացակայութեանը միջոցին. «Կարծեմ ձեր վսեմութիւնը կրնայ Եգիպտոս գտնալ առանց ո եւ է անձնական վտանգի»: «Անշուշտ, պատասխանեց Նուպար. կեանքս կատարելապէս ապահով պիտի ըլլար կառավարութեան ձեռքին մէջ. բայց փողոցին մէջ ո եւ է շարագործ մը կրնայ վրաս յարձակիլ ու սպաննել զիս: Անհերքելի փաստերով պիտի ապացուցուի որ զինով սրիկայի մը զոհը եղած եմ: Ոճրին համար՝ բնիկ վարչութիւնը ամենապոյզն պատասխանատուութեան մը պիտի չենթարկուի: Եւ սակայն ես մեռած պիտի ըլլամ:» Ո՛վ որ այդ ժամանակի Եգիպտոսը կը ճանչնայ — ու եթէ անգլիական զբաւումը չըլլար՝ այսօր ալ այն կացութիւնը պիտի տիրէր — կրնայ տարակուսիլ թէ յիշեալ խօսքերուն մէջ յայտնուած երկիւղը անհիմն էր, եւ չեմ կարծեր որ արդարութեան լիովին հարկը մատուցուած ըլլայ Նուպարի ցոյց տուած քաջութեանը՝ այն տարիներուն մէջ ուր Եգիպտոսի պատերազմը կը մղէր ընդդէմ Իսմայիլի, արեւմտեան բարենորոգման պատերազմը՝ ընդդէմ արեւելեան աւանդավորութեանը:

Քիչ զիտեմ թէ Եգիպտոսէն իր բռնի բացակայութիւններ Նուպարի համար տեսակ մը անձնական զոհողութիւններ էին զոր շատ Անգլիացիներ պիտար թէ հասկնան: Իր

ամբողջ սիրտը ու հոգին Եղիպտոսով սողորուած էր, Եղիպ-  
տոսէն դուրս — եթէ կրնամ այսպէս ըսել — ջրէն դուրս  
ձուկի պէս էր միշտ: Կը յիշեմ որ տարիներ առաջ Լոնտոն  
ինձի հետ կ'ընթրէր իրիկուն մը, ու ամառնամիջև այն գի-  
շերներէն մին էր ուր տաքութիւնը կը տէ՛ մինչև մթնշաղը:  
Հիւրերէս մին, երբ ընթրիքէն յետոյ ման կուգայինք, զիտել  
տուաւ Նուպարի, «Փաշա, ճիշդ Եղիպտոսս ենք:» «Այո,  
պատասխանեց, ճի՛շդ ու ճիշդ. միայն թէ մարդ աստղերը  
չի տեսներ:» Համազում եմ թէ մինչև և վերջը Նուպարի  
մէջ տիրապետող զգացումը մնաց Եղիպտոսի կարօտը,  
զոր օտար այցելունքը անգամ կրնան ըմբռնել: Օտար  
երկիրներու շատ բաներուն կը հետաքրքրուէր, բայց ա-  
մենքն ալ կուգային կը կեդրոնանային Եղիպտոսի համար  
ունեցած շահագրգռութեանը մէջ: Օտար պետութիւննե-  
րու քաղաքականութիւնը, ընկերական շարժումները, զի-  
տական զիւտերը բնականաբար շահեկանութեան առար-  
կաներ էին իր տարօրինակէս հզօր ու գործօն իմացակա-  
նութեան համար: Բայց որչափ աւելի մօտէն ճանչնայիք  
Նուպարը, այնչափ աւելի կը տեսնէիք թէ այս ու նմանօ-  
րինակ նիւթերու իր բոլոր ուսումնասիրութեանցը մէջ՝  
զլիաւարակէս փնտռածը ան էր թէ ի՛նչ ազդեցութիւն  
կրնային ունենալ Եղիպտոսի ճակատագրին վրայ: Երկար  
տարիներ Նուպարի հետ ունեցած անհամար խօսակցու-  
թիւններու մէջ միշտ գիտած եմ թէ մեր խօսակցութեան  
չուկեալը ի՛նչ ալ ըլլար, անպատճառ կը դառնար կուգար  
եղիպտական գործերուն: Հանրային կեանքէն վերջնապէս  
հրաժարելէն ետքը, փորձեց շատ բաներու ձեռք դարձել:  
Գիտական երկրագործութիւնը ուսումնասիրեց, եւ մեծա-  
պէս կը շահագրգռուէր իր տիպար—ազարակովը որ Շուպ-  
րայի ճամբուն վրայ կը գտնուի, Գահիրէի մօտ: Շատ ու-  
շաղթութիւն կը նուիրէր ուսոգման յատակաձեւներու, եւ  
աղով սողորուած հողերը բարուրեցու: Մտադիր էր արդի  
Եղիպտոսի պատմութիւնը գրելու, եւ գրի առաւ ու աւար-  
տեց շատ մը անձնական յիշատակներ որոնք, եթէ հրա-  
տարակուին, կարծեմ մեծ ուշադրութիւն պիտի գրաւեն:  
Բայց, ինչպէս մէկ քանի տարի առաջ ըսաւ ինձի՝ իր  
վերջնապէս Բարիք բնակութեանը միջոցին, «Շատ չան-  
ցած կը տեսնեմ որ այս բոլոր ուսումնասիրութիւնները  
կարող չեն ըլլար կոր զիս շահագրգռել: Եղիպտոսը միակ  
բանն է որ որտիս մէջ ունիմ իրօք:»

Եղիպտոսէն դուրս միակ նիւթը որուն ուժգնապէս կը  
հետաքրքրուէր, Թիւրքերուն կատարած ջարդերն էին  
Հայաստանի մէջ: Շատ խորապէս կը համակրէր իր հայ-  
րենակիցներուն տառապանքներուն, և փութով ջանահար  
կ'ըլլար ուժ տալու հայանպաստ շարժման գոր Ծրանտայի  
մէջ սկսած էր Պ. Գլմանսօ: Բայց գործին զիտակցու-  
թիւնը կը մեղմըր իր համակրանքը. — այն Անգլիացիներ-  
րուն պէս չէր ինքը սրունք Ապտիւլ Մարդասպանէն անցին  
չեն անցնիր: Պատճառ մը չեմ տեսներ հիմա թէ ինչո՛ւ  
չյիշեմ իր կարծիքը զոր յայտնեց ինձի հայկական խրժ.  
գծութեանց էն սաստիկ ատենը, ըստ որում այդ զիտու-  
ղութիւնները նշանաւոր լոյս մը կը սփռեն եւրոպական

քաղաքականութեան խնդիրներու մէջ իր հայեացքներուն  
լայնութեանը վրայ. «Ձեռքէս եկածը կ'ընեմ կոր, ըսաւ,  
եւրոպական համակմանքը շարժելու համար ինպաստ  
Հայաստանի: Իբր Հայ իմ պարտքս է այսպէս ընել, եւ  
հայրենակիցներս աչքերնին ինձի յառած են՝ կրցածս ը-  
նելու ինպաստ իրենց: Բայց կ'աշխատիմ կոր՝ առանց  
յաշողութեան յոյս ունենալու: Իմ ուղիղ պատողութիւնս  
ինձի կ'ըսէ թէ եւրոպական ոչ մէկ պետութիւն կրնայ  
շահ ունենալ պատերազմ բանալու Հայերուն համար.  
արդ, եթէ իմ գծութեանց դէմ եղած բողոքներուն ետեւէն  
պատերազմ չի գայ, բողոքները ապարդիւն են, եթէ ոչ  
բացարձակապէս վնասակար: Ասիկա չեմ կրնար ըսել իմ  
հայրենակիցներուս, բայց իրողութիւնը աս է:» Իմ հաս-  
կրցածս սա է թէ Նուպար կը հաւատար թէ Հայաստանի  
ճակատագիրն է Ռուսիայէն գրաւուիլ, բայց կը նկատէր  
թէ Թիւրքիոյ տեղ Ռուսիոյ տիրապետութիւնը այնքան  
բազում շարիքներով լեցուն էր որ գծուար թէ ո եւ է հայ  
հայրենասէր բաղձար այդ փոփոխութեանը:

Կարելի է որ հայկական գործերու մասին Նուպարի  
այս յուսահատական տեսութիւնը մասամբ հետեւանք ըլ-  
լար անձնական պատճառներու: Իր սիրական աղջկանը  
մահէն յետոյ, որ ցաւալի պարագաներու մէջ տեղի ու-  
նեցաւ, ա՛լ առջինը չէր թուէր ինձի: Ասիկց գատ, իր  
վերջնական հրաժարումէն քիչ առաջ ունեցած արկածը  
(տաքին կոտորիլը) իրեն համար աղբիւր մը եղաւ ֆիզիքա-  
կան այնպիսի ցաւերու որոնք կ'ընկճեն ո եւ է մարդ, այլ  
մանաւանդ այն տարիքին մէջ ուր ձեռութիւնը ի հարկէ  
սպառած է վերանորոգիչ ոյժը: Բայց, ինչպէս կ'երեւակա-  
յեմ, այս ամէնէն աւելի զինքը վշտակրողն էր իր բռնի  
հեռացումը իր կեանքին աշխատութեան գաշտէն: «Կա՛մ  
կեսար կա՛մ ոչինչ» խօսքը Արեւելքի մէջ մանաւանդ  
ճիշդ է: Եթէ կեսար չլը, բա՛ն մը կամ մէկը չլը: Եւ  
Նուպար, իր պայծառ տեսութեամբը, քաջ զիտար թէ, անգ-  
լիական գրաւման ներքեւ, անգամ մը որ զայրած էր  
հաճելի ըլլալէ Գահիրէի անգլիական իշխանութեանց, իր  
եղիպտական սուպարէզը վերջացած էր: Ասոր գիտակցու-  
թիւնը՝ ալ աւելի ծանրացուց սպառող առողջութեան եւ  
հատնող կորովին բեռը:

Ե՛՛մ ժամանակը գայ Եղիպտոսի՝ եւ այդ երկրին ու  
Անգլիոյ յարաբերութեանց ճշմարիտ պատմութիւնը գրե-  
լու, կը հաւատամ թէ Նուպարի կատարած գիրին նկատ-  
մամբ անգլիական համարումը շատ աւելի բարձր պիտի  
ըլլայ անոր մահունընէն յետոյ քան որչափ եղաւ անոր  
կենդանութեանը: Սա ալ պարտիմ աւելցնել որ, իբր  
մարդ, տարօրինակապէս ուղիղ ու անյողոգող բարեկամ մըն  
էր, եւ թէ ի՛նչ ալ եղած ըլլան իր թերութիւնները իբր  
վարչազետ, մարդ մըն էր ան բացառիկ իմացականու-  
թեամբ, բարձր փառասիրութիւններով, մտաւորական ար-  
տաստվոր ոյժով, եւ վարողութեան արտաստվոր հրա-  
պոյրով մը՝ իր սիրած եւ վստահացած բոլոր անձերուն  
համար:

(Տեղի Թեղեկրաֆ) ԷՏՈՒՐՏ ՏՍԾՍԷ

Նուպար փաշայի մահուանով Եղիպտոսը կը կորսնցնէ իր դեռ անուանապէս վայելած կէս-անկախութեան ամէնէն հաւատարիմ, եթէ ոչ վերջին նեցուկը: Այդ մահուանով՝ աշխարհիս բեմէն կ'անհետանայ մարդ մը որուն արտակարգ գործունէութիւնը, կըթնած ընդամենն ճարտար-մասութեան մը որ ցեղային ձիրք մըն էր, տասը տարիէն աւելի բաւեց ուշացնելու համար երկրի մը վարչական գրաւումը:

Նուպար փաշա կրնայ ըլլալ որ սխալեցաւ զուցէ, սա կէտին մէջ թէ ինչ եղանակով ծառայելու էր Եղիպտոսի եւ ինչ միջոցներով պաշտպանելու էր ինքնօրինութիւնը զոր ինք այնքան ջանահնար եղած էր այդ երկրին ապահովելու համար: Կարծեց թէ, անդլիական բանակը Եղիպտոս գտնուելով հանդերձ, կրնար այնպէս մը ընել որ — իր խօսքն է ասիկա — «վարչական գրաւում» տեղի չունենայ: Բայց պատմութիւնը պիտի ըսէ թէ վերջին կէս-դարու գրեթէ անկախ Եղիպտոսին հիմնադիրը՝ եւ եւ պիտոցի պետական մարզերուն մէջ անոր ամէնէն մեծ պաշտպանը եղաւ միանգամայն: Ահա՛ իր դերը արտաքին քաղաքականութեան մէջ:

Բուն երկրին մէջ, մէկ մտածում միայն ունեցաւ, և ատկից աւելի մեծ մտածում չի կայ, — այն է, արդարութեան տիրապետութիւնը հաստատել եւ ապահովել: Դատաւորներով եւ օրէնքներով, կ'ըսէր յաճախ, պիտի փրկուինք այս երկիրը: Եղիպտոսի՝ գառաւորներ ու օրէնքներ տալու, եւ այդ օրէնքներուն ու գառաւորներուն՝ Նեղոսի ափերուն վրայ իրար խառնուած ցեղերուն, գասակարգերուն ու դաւանանքներուն յարգանքը ապահովելու համար է որ սկսաւ եւ յաջողութեամբ ի զուտ հանեց իր կեանքին մեծ գործը, այն է գատական բարենորոգումը: Եթէ 19րդ դարուն վերջը Եղիպտոսի խաղաղ ու քաղաքակիրթ պետութիւն մըն է, ատկեա կը պարտի ոչ այնչափ աշխարհակախներու (Անգլիացիները) քաղաքական գերին որչափ Նուպար փաշայի վարչական գերին: Ահա ինչու Նուպար փաշա իր ասպանագիր ընտրած է բանաձեւ մը որ իր բոլոր կեանքը կ'ամփոփէ. «Առանց արդարութեան չի՞ք կառավարութիւն»:

...Իր հիմնած զլիստոր գործը կը մնայ: Արդարութիւնը կը տիրէ Եղիպտոսի մէջ: Խառն գատարանները, որոնց գոյութիւնը վտանգի տակ կը թուէր, նորէն երկարաձգուեցան վերջերս:

Նուպար փաշայի կեանքին վերջին տարիները տառապանքին տրտմութեանը մէջ անցան, — ֆիզիքական տառապանք՝ երկարատեւ հիւանդութեան մը պատճառաւ, ու բարոյական տառապանք՝ Հայաստանի եղբորական վկայներուն պատճառաւ: Նուպար փաշա բան մը չի նայեց կըրցածին չափ մեղմելու համար իր ժողովրդին թշուառութիւնը: Թէ՛ Գահիրէ և թէ՛ Բարեղ, շատ նպաստամատոյց յանձնածողութեան հոգին եղաւ:

Իր իսկ վախճանին թախծութիւններուն մէջ, յաճախ ցափ ազազակներ արձակեց իմանալով Հայերուն կրած տառապանքները, եւ կարելի է թէ ըսել բարոյապէս տանջուեցաւ իրեններուն հետ:

Կարելի է ցափ որ Նուպար փաշայի յղացումները մէշտ համաձայն չեղան Եղիպտոսի մէջ Ֆրանսայի քաղաքականութեան յղացումներուն հետ: Բայց պէտք է յիշել որ մեր իրաւադիտութիւնը, մեր լեզուն, մեր ազդեցութիւնն էր որ յաղթանակեցին Նեղոսի ափերուն վրայ՝ իր կեանքին մեծագոյն մասին մէջ: Վերջապէս, Բարեղի մէջ է որ եկաւ մեռաւ Նուպար փաշա, որ, աներկբայ, այս դարուն մեծ պետական-մարդերէն մին է: Երբեմն զինքը Արեւելի Գալուսը կը կոչէին: Ինք նախամեծար կը համարէր որ զինքը «Եղիպտոսի մէջ արդարութեան պաշտպանը» անուանեն:

(Թաւ)

Ահաւասիկ հասուածներ այն շատ գեղեցիկ յօդուածէն զոր Պ. աը Վոկիւէ Ֆիկաստի մէջ կը նուիրէ Նուպար փաշայի:

Հայազգի Նուպար կը վերաբերէր այդ զմբաղդ ու ցրուած ցեղին որ իր զանազան տէրերուն տուած կամ անոնց դէմ հանած է մէկ քանի առաջնակարգ քաղաքականներ, — Լօրիս-Մէլիքօֆ, Աղարեան պատրիարք, Նուպար փաշա, այս երեքը միայն յիշելով անոնցմէ զուրուշ մօտէն ճանչցած եմ: Լօրիս կըրցաւ իր տաղանդը ցոյց տալ ի զուտ մեծ կայսրութեան մը: Միւս երկուքը, որոնք նոյնքան նպաստաւոր պարագաներու մէջ չգտնուեցան, այլ նոյնքան ճշիւ ձիրքերով օժտուած էին, ինձի թուած են հաւասար, եթէ ոչ զերտզանց, այն պետական մարդերուն զորոնք տեսած եմ Եւրոպայի առաջին գրեթէ բուն մէջ: Պերճախօսութիւն, համոզելու ձիրք, նկարագրի յամառութիւն, սքանչելապէս գիւրաթեք իմացականութեանը մէջ՝ հնարքներու բեղմնաւորութիւն, բան մը պիտի չպակուէր իրենց՝ աւելի ընդարձակ եւ աւելի ազատ թատերաբեմի մը վրայ՝ նշանաւոր հանդիսանալու համար այն գեղեցիկ գործերով կամ մեծ անբարոյականութիւններով որոնք անուն մը առ յաւել կը քանդակեն մարդոց սքանչացմանը մէջ:

...Օր մը, 1878ին, այն իրիկուան խօսակցութիւններէն մէկուն մէջ ուր Կորչաքօֆ իշխանը յոյնութիւնը կ'առնէր, ծեր գիւանազէտը յանկարծ ըսաւ ինձի. «Նուպար փաշա իկնաթիֆի միջոցաւ գալափարս հասկնալ կ'ուզէ. անկախ Պուլկարիոյ կառավարիչ անուանուիլ կ'ուզէ» իշխանը մեծ համարումով խօսեցաւ եղիպտացի նախարարին կարողութեանը վրայ. բայց իրաւամբ եզրակացուց թէ ցեղերուն թշնամութիւնը կ'ընդդիմանար այս անըրջական բազձանքին. Հայ մը երբեք պիտի չկրնար հեղինակութիւն ձեռք բերել այդ Սլաւներուն վրայ: Նուպար կ'աշխատէր արդարեւ որ զինքը գործածեն օսմանեան լուծէն ազատագրուող այդ պղտիկ ազգերէն մէկուն կառավարչութեանը: Իր ամէնէն սիրելի բաժնիւնքն էր վերաշինել իր ազգը, հայ Պետութեան մը վերածննդեանը նախապահել: Յայտնի են այն աշխարհալրական ու քաղա-

քական գծաւորութիւնները որոնք անհնարին կը դարձնէին այդ բաղձանքը: Հասկցաւ ասիկա, ա'լ բանի մը չբաղձաց, ու լսիկ ծերացաւ մեր Բարիզին մէջ, հանգիստ նաւահան, զիստ այն նաւարեկեալներուն համար որոնք զրամարկը ազատած են:

ԼՈՒՐԵՐ

Քիչորի կ. Պոլսոյ քղրակիցը յռնուար 3 բռնակաւնով հետեւեալ արտաձնիկ տեղեկոթիւնները կոչուայ Հայաստանի կայնոթեանը մասին.

«Երեսերէն եկած նամակները շատ երկիւղալի ցոյց կուտան Հայաստանի կայնոթիւնը: Հայերը կը տառապին ոչ միայն Թիւրքերուն ոչ Քիւրտերուն հալածանքէն, բայց շատ տեղ սկսած են հացի պակասը գզայ, հիւմակ որ անոնք իրենց դռար ափ առած է: Օտար նպաստի գոչմանները հատած են, եւ կառավարութիւնը ամենաբոյզն զիջողութիւն ըրած չունի՝ ընդհանուր բռնառութիւնը մեղմելու համար: Բազմաթիւ սովորուած գեղացիներ ընդ իսկ պէտք եղածին չափ հագնելիք չունին՝ օրինակ պատասպարուելու համար: Միշտ կողմէ, իրենց հարստահարիչները երբայով աչ աշէլի բռնառութիւնը կը դառնան: Թշուառութիւնը աշտըցնողն է մշակութեան գործիքներն եւ անասուններն սակաւութիւնը: Արտ մշակներուն թիւն աչ մեծապէս պակասած է, եւ Քիւրտերուն գրաւած հողերը ետ դարձնուած չեն. իշխանութիւնները դժուարութիւններ կը յարուցանեն ու է երթեւեկութեան առջեւ, եւ Հայերուն դժբաղդութիւնը կատարեալ ընելու համար՝ հռնուածը շատ գեշ էր: Չիւնուրակի տուրքին յետաձգմանը պատճառաւ (տարուան մը համար), հարկահանները միշտ տուրքերուն հաշարումը կը կատարեն աշէլի խտտութեամբ եւ անխղճութեամբ: Չարդերէն ի վեր՝ ոչ մէկ եկեղեցի կամ դպրոց վերաշինուած է: Ետ գիւղերն մէջ որոնք ամենեւնի աշէլի վտանգուած են խոտմարտեանց ատեն, իշխանութիւնները մեացող Հայերուն քող չեն տար տուներին իսկ վերաշինելու: Կը տեսնուի անա թէ Հայերուն կայնոթիւնը բարձրած չէ 1895--96ի դեպքերէն ի վեր, թեպէտ՝ կանոնաւոր հեղինակներուն տակ՝ երեք տարին բաշական պիտի ըլլար զանոնք ազատելու օտար նպաստի կարիքէն: Հանգամանքները սակայն ոչ միայն կանոնաւոր չեղան, այլ տարուէ տարի վատբարակաւ յիշուած են: Ոչտի ջանքեր կ'ըլլան՝ օտար երկիրներն մէջ նորին համակրանք արբնցնելու ի նպաստ Հայերուն տառապանքներուն, նոր կու մը ուղղելու համար եզրուպական բարեփոխութեան: Եպատի սոխպողական պէտք կայ, եւ երբ փոքրով չհասնի, կը վախճուի որ անօրոթիւնը եւ մեր կոթիւնը բազմաթիւ զոներ պիտի հնձեն:»

—Դաւրեթի Հայնոթեաց Բարեգործական ընկերութիւնը

թիւնը հետեւեալ նամակը դրկած էր Անգլիոյ Հայկական Եպատարանտոյց Յանձնաժողովին նախագահ Ուեարմիւնդրի քոթքիւն.

«Դաւրեթ, 18 դեկտեմբեր. — Ստորագրեալները պատիւ ունինք մեր երախտագիտութիւնը յայտնելու թիւրքիոյ մեր դժբաղդ եղբայրներուն մասին ձեր յանձնաժողովին քոթքը ըրածներուն համար: Փոքր-Ստիւսայն վերջին տարիներն ահաւելի շարքերուն պատճառաւ, ողջ մնացողներէն շատեր, թիւրք իշխանութեան ներքեւ սպրեւը վտանգներէն սարսափած, Պարսկաստան գաղթած են, եւ հոս մեր ձեռքէն եկածը կ'ընենք կարելի եղածին չափ մեղմելու անոնց բռնառութիւնը: Բայց Դաւրեթի հայ հասարակութիւնը ոչ այնչափ բազմաթիւ եւ ոչ այնչափ հարուստ է որ կարեւայ պատասխանել անբողջովին այս մշտական դիմումներուն: Այս բռնառ գաղթականները հարիւրներով կոչուան երթեմն, եւ հացը շատ սոռոց է, զանազան պատճառներով: Կ'աղաչենք ոչտի մէջ Պայծառափայլութեան որ ծանօթացնէ այս տառապանքը եւ աշակցի մեզի ազատելու այս դժբաղդ գաղթականներուն կեանքը:»

Երանկի կ'ընկերակար Դաւրեթի անգլիական հիւսնոթիւն մէկ գիրք որով կը յայտնէր թէ այս կուցը հիւնուար է և ամեն բարեւեր մարդը նկատուան սրժակի: Յանձնաժողովը ընդ մեռուայն 100 ոսկի դրկեց Դաւրեթ:

— Հակառակ Դրան քոթքը հերքումներուն, Երանկի մէջ կայնոթիւնը շատ ծանր է: Քիւրտի կը հեռագրի.

«Հոտեյտային դեկտեմբեր 26 բռնակաւնով հասած մասնաւոր տեղեկութիւններ կ'ըսեն թէ անցեալ նոյեմբեր 30ին թիւրք զօրքերուն եւ սպատարներուն միջեւ մեծ պատերազմ մը տեղի ունեցեր է: Թիւրք զօրքերը, թեպէտ յաղթեր ու սպատարներուն դիրքը գրաւեր են, 2,000 մեռեալ ու վիրաւոր ունեցեր են: Ապատարներուն կորուստն է 4,000 մեռեալ ու վիրաւոր:»

«Պատերազմական գործողութիւնները կը շարունակուին, եւ կ'ըսուի թէ թիւրք զօրքերը կը յառաջանան դիպի Սաստա, որ կարեւոր սպատարապետի մը բանակատեղի է: Ապտոռլլան փաշա հրաման տուցեր է Սաստան գրաւելու:»

«Ապտարներէն նուաձնուած ըլլալէ շատ հեռու է, եւ Սաստայի գաւառին մէջ թիւրք զօրաւարին գործը դիւրին պիտի չըլլայ, որովհետեւ զիսաւոր դիրքերը սպրտարներուն ձեռքն են: Ասկից գատ, թիւրք զօրքերէն շատեր դասալիք կ'ըլլան:»

ՀԱՍՏԷ ՈՒ ԲԱԺՆԵՐԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկից զրկել առ

L. FRANK,  
309, LADBROKE GROVE,  
(ENGLAND). LONDON, W.